

ԻՍՐԱՅԷԼ ՀՐԹԻՌԱԿՈՏԵՅ ՀԱԼԴՊԻ ՄԻԶԱԶՎԱՅԻՆ ՕՂԱԿԱՅԱՆԸ

Երեքշաբթի, 7 Մարտ 2023-ի կես գիշերը անց, ժամը 2:07-ին, Իսրայել հրթիռակոծեց Հալեպի միջազգային օդակայանը:

Իսրայելեան հրթիռները թիրախ դարձուցին օդանավերու վայրէջքի բաժինը: Արձանագրուեցան նիւթական վնասներ:

Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:



ՀԱԼԴՊԻ ՄԻԶԱԶՎԱՅԻՆ ՕՂԱԿԱՅԱՆԸ ԾԱՌԱՅՈՒԹԵՆ ԴՈՒՐՍ ԵԿԱԼ



Չինուորական աղբիւր մը յայտնեց, որ Երեքշաբթի կեսգիշերէն ետք, ժամը 2:07-ին Իսրայելեան ուժերու կողմէ Հալեպի միջազգային օդակայանի հրթիռակոծումին հետեւանքով օդակայանը ծառայութենէ դուրս եկած է:

Հրթիռակոծումը տեղի ունեցած է միջերկրական ծովուն կողմէն, Լաթաքիոյ արեւմուտքէն:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐՈՒ ՆԵՐԹԱՓԱՆՅՈՂ ԽՈՒՄԻ ԶԱՐԴԱԿՄԱՆ ՀԵՏԵԱՆՔՈՎ ԶՈՂՈՒԵՅԱԼ 3 ԱՐՅԱՆՏՅԻ ՈՍՏԻԿԱՆ

Ատրպեյճանի զինեալ ուժերու ներթափանցող խումբի՝ 5 Մարտի առաւօտեան ձեռնարկած յարձակման հետեւանքով զոհուեցաւ Արցախի Ներքին գործոց Նախարարութեան ոստիկանութեան 3 ծառայող, մէկ ուրիշն ալ վիրաւորուեցաւ: «Արմէնփրէս»-ի հաղորդումով՝ այս մասին տեղեկացուցած է ոստիկանութեան դիմատետրի էջը:

«5 Մարտի առաւօտեան՝ ժամը 10:00-ի սահմաններուն մէջ, ատրպեյճանական զինուորի ներթափանցող խումբը «Խայփալու» կղզուղ տեղանքին մէջ թիրախաւորած եւ կրակ բացած է ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութեան անձնակազմի հերթափոխի մեքենային վրայ: Ներթափանցման փորձին հետեւանքով զոհուած է ոստիկանութեան 3 ծառայող:

Փոխգնդապետ՝ Արմեն Մայրոյի Բարայեան

Հարիւրապետ՝ Դաւիթ Վալերիի Դանիելեան

Տասնապետ՝ Արարատ Թելմանի Գասպարեան:

Եւս մէկ ծառայող՝ տասնապետ Դաւիթ Աշոտի Յովսէփեան, ստացած է կրծքավանդակի հրազէնային վիրաւորում եւ կը գտնուի հանրապետական բժշկական կեդրոնին մէջ:



Ներքին գործոց Նախարարութիւնը, այս ծանր պահուն, կը կիսէ զոհուած ոստիկաններու կորուստի վիշտը, զօրակցութիւն կը յայտնէ անոնց ընտանիքներու անդամներուն», արձանագրուած է հաղորդագրութեան մէջ:

Այնուհետեւ Արցախի Ներքին գործոց Նախարարութիւնը հաղորդեց, որ Արցախի ոստիկանութեան ծառայողներու եւ «Խայփալու» կղզուղ տեղանքին յարակից դիրքին մէջ գտնուող Պաշտպանութեան բանակի զինուորներու ինքնապաշտպանական ու զսպիչ գործողութիւններուն շնորհիւ ատրպեյճանական կողմը մարտի ընթացքին Նոյնպէս ունեցած է զոհեր ու վիրաւորներ՝ ետ շարտուելով ելման դիրքեր:

Ատրպեյճանական կողմը կեղծ փաստեր կը ներկայացնէ՝ պնդելով, որ իբրեւ թէ ոստիկանական մեքենայով զէնք կը տեղափոխուէր Հայաստանէն Արցախ: Մինչդեռ իրականութեան մէջ ո՛չ միայն որբել զէնք չէր տեղափոխուէր, այլեւ՝ ոստիկանութեան ծառայողները Ստեփանակերտէն կ'երթային դէպի ճամբուն վրայ գտնուող իրենց հերթափոխի վայր:

Ատրպեյճանական ներթափանցող խումբը դարանակալած էր ճանապարհամերձ անտառապատ տարածքին մէջ եւ այնտեղէն յարձակած էր մեքենային վրայ: Դեպքի վայր հասած եւ Ռուսիոյ դաշնութեան խաղաղապահ զօրախումբի միաւորումները:

ՌՈՒՄԻՈՅ ԲԱՐԵՄԻՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Կիրակի, 5 Մարտ 2023-ի յետմիջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սուրենեան» դահլիճէն ներս ընդունեց այցելութիւնը Հալեպի մէջ հաշտեցման կեդրոնի վարչութեան պետ գնդապետ Եսիունին Սերգէյ Վլատիմիրովիչի եւ



Ազգութիւններու հարցերով դաշնային գործակալութեան պետի խորհրդական Հայկազ Մայիսովիչ Միքայելեանի, որոնք հանդիպում ունենալով Սրբազան Հօր հետ, համագործակցութիւն ոգիով, երկրաշարժի հետեւանքները թեթեւցնելու համար Ռուսիոյ գանազան բարեփոխական հաստատութիւններու կողմէ որոշ կեդրոններու առընթեր, Նաեւ մեր Թեմին աննդեղէնի կողովներէ բաղկացած օժանդակութիւն յանձնեցին:

Հանդիպումին ներկայ գտնուեցան Նաեւ Բերիոյ Հայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմինի ատենապետ տիար Յարութ Հայրապետեան եւ Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ տիար Միհրան Վարդապետեան:

Սրբազան Հայրը Թեմին անունով շնորհակալութիւն յայտնեց այցելուներուն եւ բարեյաջող գործունեութիւն մաղթեց անոնց:

«LOUVRE D'ORIENT» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԱՅՅԵԼԵՅ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

Կիրակի, 5 Մարտ 2023-ին, յետ Սուրբ եւ Ամմաի Պատարագին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սուրենեան» դահլիճէն ներս հիւրընկալեց Լիբանանէն ժամանած «Louvre D'Orient» հաստատութեան պատասխանատու պարոն Վինսընթը, որ աշխատանքային ծրագիրով այս օրերուն կը գտնուի Հալեպ, ապա պիտի մեկնի Լաթաքիա, իրազէ կ դառնալու յետ երկրաշարժի տիրող իրավիճակին եւ հաստատութեան կողմէ ծառայութիւններ մատուցելու:



Սրբազան Հօր հետ ունեցած խորհրդակցական հանդիպումին, պարոն Վինսընթը անդրադարձաւ հաստատութեան աշխատանքային ծառայութիւններուն եւ պատրաստակամութիւն յայտնեց Թեմին օգտակար դառնալու:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ Նաեւ Բերիոյ Հայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմինի ատենապետ տիար Յարութ Հայրապետեան:

Խմբագրական

ՍՈՐԻՎԱՆ ՑՆՑԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՆ ՄԵԿ ԱՄԻՍ ԱՆՑ

Արդեն ամիս մը անցած է 6 Փետրուարին Սուրիոյ Զալէպ, Լաթաքիա, Իտլիպ եւ Զամա քաղաքները ցնցած ահաւոր երկրաշարժէն: Երկրաշարժէն օրեր անց այս նահանգներու վնասուած քաղաքները յայտարարուեցան աղետեալ քաղաքներ:

Պետական պաշտօնական տուեալներուն համաձայն, զոհերուն թիւը հասաւ 1414-ի, վիրաւորներունը՝ աւելի քան 5000-ի: Եթէ նկատի ունենանք նաեւ Սուրիոյ պետութեան վերահսկողութենէն դուրս գտնուող շրջանները, զոհերուն թիւը կ'անցնի 5000-ը: Պետական տուեալներուն համաձայն, երկրաշարժէն վնասուած ընտանիքներուն թիւը հասաւ 91.794-ի, իսկ քաղաքացիներունը ընդ. առմամբ՝ 414.304-ի: Փլատակներուն տակէն դուրս բերուած է 1553 վերապրող, 6 անհետ կորած: Փլուզուած է 292 շէք, անբնակելի կամ անապահով յայտարարուած է 4444 շէք: Զիմբերու վերանորոգութեան կարիք ունեցող 29.751 շէք արձանագրուած է, իսկ նորոգութեան կարիք ունեցող, սակայն բնակելի՝ 30.113 շէք:

Բնակարաններու ստուգման գործողութիւնը կը շարունակուի, իսկ երկրաշարժէն տուժածներուն համար կեցութեան նոր կեդրոններ կը հաստատուին:

Սուրիան տարիներ է վեր կը գտնուեր տնտեսական պատժամիջոցներու ազդեցութեան տակ, ինչ որ առաջին օրերուն դժուարացուց այլատեսակ օժանկութիւններու հասանելիութիւնը: Բարեբախտաբար տարբեր երկիրներու կոչին լոյսին տակ Սուրիոյ դէմ ԱՄՆ-ի եւ արեւմտեան երկիրներու կարգ մը պատժամիջոցներ վեց ամսուան համար չեղեալ համարուեցան, ինչ որ նպաստեց տարբեր կողմերէ թշկական եւ մարդասիրական օժանկութիւններու հասանելիութեան:

Յալէպի, Լաթաքիոյ եւ Զեսապի հայ համայնքները եւս մեծապէս տուժեցին այս երկրաշարժէն: Զալէպի հայ համայնքին մէջ արձանագրուեցան երկու զոհ եւ տասնեակ մը վիրաւոր: Բնակարանները եւ ազգային-կրթական-եկեղեցական կառոյցները լուրջ վնասներ կրեցին: Զալէպահայ միութիւնները, յարանուանութիւններն ու կազմակերպութիւնները փութացին ժողովուրդին օգնութեան:

Բերիոյ Զայոց Թեմի ազգային իշխանութիւնն ու մարմինները, մեր ուղեկից միութիւններն ու երիտասարդները եւս լծուեցան ժողովուրդին օժանկութեան ծառայողական աշխատանքին:

Այս բոլոր դժուարութիւնները հարկ էր դիմագրաւել Սուրիոյ յետպատերազմեան եւ տնտեսական պատիժներու ծանր իրավիճակին լոյսին տակ:

Այդուամենայնիւ ծառայողական աշխատանքը ընթացք առաւ:

Բերիոյ Թեմի Նպաստից Մարմինը արդէն իսկ պատերազմի տարիներէն ի վեր լծուած էր ժողովուրդի օժանկութեան աշխատանքին: Երկրաշարժէն ետք եւս, մարմինն գործակցութիւնը ոչ-կարավառական, եկեղեցական կազմակերպութիւններու հետ շարունակուեցաւ ու տարբեր օժանկութիւններ յատկացուեցան մեր ժողովուրդի գաւակներուն, ինչպէս նիւթական, սննդակողովներու, վերարկուներու, նորածիններու կաթի եւ խնամքի անհրաժեշտ պիտոյքներու բաշխում, ակումբներուն եւ եկեղեցիներուն մէջ ապաստանողներուն ծածկոցներու, սնունդի յատկացում: Ընկերային ծառայութեան խորհուրդը եւս սննդակողովներ եւ դեղորայք յատկացուց ժողովուրդին, իսկ Սուրիահայ օգնութեան հաշը սնունդ, դեղորայք, թշկական ծառայութիւն եւ նիւթական օժանկութիւն յատկացուց մեր ժողովուրդի գաւակներուն: Այս բոլորը տեղի ունեցան յաճախ կարիքներու առաջնահերթութիւնները նկատի ունենալով:

Մեր ակումբներն ու եկեղեցիները դարձան ապաստանեալ ժողովուրդին համար ապահով վայրեր երկրաշարժի առաջին օրէն մինչեւ այսօր, նկատի ունենալով յետցնցումներու շարունակութիւնը:

Բնակարաններու նորոգութեան համար Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական արտակարգ ժողովին որոշումով յառաջացաւ երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին մը, որ երեք մասնագիտական յանձնախումբերով նախ ցանկագրեց, ապա մասնագետ երկրաշարժի գործուղեց վնասուած հայրորդիներու բնակարաններու ստուգման համար եւ նորոգութեան համապատասխան թղթածրարներ պատրաստեց:

Յետագային կազմուեցաւ Զալէպի քրիստոնեայ համայնքներու միջ-եկեղեցական խորհուրդ մը, որուն մաս կազմեցին Զալէպի հայ եւ քրիստոնեայ-արաբ տասնմէկ համայնքներու պետեր ու ներկայացուցիչներ:

Այս խորհուրդին վստահուեցաւ եկեղեցական եւ ոչ-կառավարական միջազգային կազմակերպութիւններու օժանկութեամբ վնասուած բնակարաններու նորոգութեան եւ անօթեւաններու վարձակալութեան աշխատանքը:

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետը այցելեց աղետեալ Զալէպ քաղաք, հանդիպեցաւ ժողովուրդին եւ թեմի ազգային մարմիններուն, մամլոյ ասուլիսով կոչ ուղղեց միջազգային հանրութեան չեղեալ համարելու Սուրիոյ դէմ սահմանուած բոլոր պատժամիջոցները, իսկ սուրիահայութեան իր պատգամը ուղղելով ըսաւ, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր բոլոր թեմերով, միաբաններով եւ մարմիններով զօրավիգ պիտի կանգնի սուրիահայութեան: Արդէն իսկ կաթողիկոսութեան տարբեր թեմերէ ներս սկսած են նուիրահաւաքի

-Սուրիոյ քաղաքային թռիչքներու հաստատութեան տնօրէն Պասեմ Մանսուր յայտնեց, որ Իսրայէլի դէմ գանգատ ներկայացուեցաւ «ICAQ» քաղաքային թռիչքներու Միջազգային Կազմակերպութեան՝ Զալէպի Միջազգային Օդակայանը հրթիռակոծելուն համար: Մանսուր կոչ ուղղեց Իսրայէլը համապատասխան պատիժի ենթարկելու եւ օդակայանին կրած վնասներուն փոխհատուցում վճարելու:



-Եւրոպական «Air Mediterranean» օդանաւային ընկերութիւնը յայտարարեց, որ դէպի Սուրիա թռիչքներու 11 տարուան դադարեցումէն ետք, Սուրիա առաջին թռիչքը ընթացք պիտի առնէ Զինգաբթի, 9 Մարտ 2023-ին:



Ընկերութիւնը աւելցուց, որ Զինգաբթի օրուղն սկսեալ շաբաթական երկու օդանաւ պիտի ուղղուի Սուրիա հետեւեալ ձեւով.

-Երկուշաբթի եւ Զինգաբթի օրերը՝ Յունաստանի Աթենք մայրաքաղաքէն Դամասկոս.

-Ուրբաթ եւ Երեքշաբթի օրերը՝ Դամասկոսէն Աթենք:

Յիշենք, որ եւրոպական օդանաւային ընկերութիւնները դադարեցուցած էին իրենց թռիչքները դէպի Սուրիա 2012-էն ի վեր՝ Սուրիոյ դէմ ամերիկեան եւ եւրոպական պատժամիջոցներուն հետեւանքով:

-«Ալ Մայատին» հաղորդեց, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուտ Չաոււշօղլու մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, թէ յառաջիկայ շաբաթ, Մոսկուայի մէջ ժողով մը տեղի պիտի ունենայ՝ Թուրքիոյ, Ռուսիոյ, Սուրիոյ եւ Իրանի միջեւ՝ որպէս նախապատրաստութիւն 4 երկիրներուն արտաքին գործոց նախարարներուն հանդիպման:



Օղլու աւելցուց, որ նախապէս Թուրքիոյ, Սուրիոյ եւ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարներուն եւ գաղտնի սպասարկութեան պետերուն միջեւ ժողով մը տեղի ունեցաւ, ետքը՝ Իրանի ԱԳ նախարարի Թուրքիա այցելութեան ընթացքին համաձայնութիւն գոյացաւ նաեւ ժողովներուն Իրանի մասնակցութեան, Ասթանայի բանակցութիւններուն շրջագիծէն ներս: Օղլու շեշտեց, որ Ասթանայի բանակցութիւնը սուրիական տագնապի լուծման գործնական միակ ընթացքն է:

աշխատանքներ:

Այս իմաստով նկատառելի աշխատանք կը տանի նաեւ Զայ Օգնութեան Միութեան Կեդր. Վարչութիւնը, որ զօրաշարժի ենթարկած է իր բոլոր մասնաճիւղերը եւ կազմակերպած է նուիրահաւաք ու արդէն իսկ իր օժանկութիւնները սկսած է առաքել Ե՛ւ սուրիահայ համայնքին, Ե՛ւ Սուրիոյ ժողովուրդին:

Այս ընթացքին Զայաստանի Զանրապետութիւնը եւս անմիջապէս փութաց Սուրիոյ օժանկութեան եւ երկու անգամով մարդասիրական օժանկութիւն, ապա նաեւ որոնողափրկարարական խումբ ուղարկեց Սուրիոյ ժողովուրդին օժանկակելու:

Սուրիոյ Դամասկոս եւ Զալէպ քաղաքներ այցելեց նաեւ Զայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանը եւ հանդիպումներ ունեցաւ Սուրիոյ նախագահին, արտաքին գործոց նախարարին եւ Զալէպի նահանգապետին հետ:

Զայաստանի Զամահայկական Զիմնադրամը եւս նիւթական օժանկութիւն յատկացուց հայկական դպրոցներու կրթական մշակներուն եւ վնասուած կրթական կառոյցներու վերանորոգութեան համար:

Վերջերս Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը յայտարարեց նաեւ մարդահամարի մասին՝ յառաջիկայ աշխատանքներու կարգաւորման եւ ժողովուրդի տարբեր կարիքներու բաւարարման համար:

Բերիոյ Զայոց Թեմի ազգային մարմիններու, միութիւններու եւ կազմակերպութիւններու տարած նուիրական աշխատանքին զօրակցութիւնը համայն հայութեան կողմէ, բնականաբար, պիտի նպաստէ աղետալի երկրաշարժի հետեւանքներու յաղթահարման եւ աւելի քան տասնամեակ մը պատերազմի հետեւանքները դիմագրաւող սուրիահայութեան վերականգնումին:

Ամեն ժամանակներէ աւելի՝ աղետաբեր երկրաշարժին յաջորդող այս օրերուն, համայն հայութեան զօրակցութիւնը իր դրական անդրադարձը պիտի ունենայ յատկապէս սուրիահայութեան գոյերթի պահպանման վրայ:

Լուրեր Հայաշխարհին

Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը Հասցնուած Եւ Արձանի Մէջ Ատրպէյճանական Զինուորի Կողմէ Ուսուցանական Մեքենայի Վրայ Յարձակման Փաստը

Ռուսիոյ Դաշնութեան Պաշտպանութեան Նախարարութիւնը անդրադարձած է ատրպէյճանական զինուորի կողմէ Արցախի մէջ ուսուցանական մեքենայի գնդակոծման եւ մարդոց մահուան փաստին եւ նշած, որ փաստին առնչութեամբ ռուսական խաղաղապահ զօրախումբի հրամանատարութիւնը ատրպէյճանական եւ հայկական կողմերուն հետ հետաքննութիւն կը կատարէ:



«Արմէնփրէս»-ի հաղորդումով՝ Նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ կը նշուի. «Ռուսական խաղաղապահ զօրախումբը կը շարունակէ առաջադրանքներ իրականացնել Լեռնային Ղարաբաղի տարածքին մէջ: Երեսուն դիտակէտերու մէջ ռուս խաղաղապահները իրավիճակի շուրջօրեայ վերահսկողութիւն կ'իրականացնեն եւ կը վերահսկեն հրադադարի դրութեան պահպանման: 5 մարտ 2023-ի ժամը 10:00-ին Դիւքեանկար բնակավայրի տարածքին մէջ Ատրպէյճանի զինուած ուժերու զինուորները կրակած են Լեռնային Ղարաբաղի իրաւապահներու մեքենայի վրայ: Բախման հետեւանքով երեք մարդ զոհուած է, մեքենային մէջ գտնուող մէկ աշխատակից վիրաւորուած է: Ատրպէյճանական կողմէն կորուստներ եւս եղած են. երկու զոհ եւ մէկ վիրաւոր: Ռուս խաղաղապահներու ջանքերով բախումը դադարեցուած է: Այդ փաստի կապակցութեամբ ռուսական խաղաղապահ զօրախումբի հրամանատարութիւնը ատրպէյճանական եւ հայկական կողմերուն հետ հետաքննութիւն կը կատարէ»:

Մոսկեան. «ԿՏՐՈՒԿ ԲԱՅԼԵՐԸ ՊԻՏԻ ՅՆԱԳԵՆՆԵՆ ՄԱՎՃՈՒԹԻ, ՈՐՈՎԼԵՏԵՒ ԱՐՉՆՆՉԻՆԵՐԸ ԻՐԵՆՉ ԸՆԵՒԻՔԸ ԱՐՈՒԵՆ ԸԱՏԾ ԵՆ»

«Ատրպէյճանի՝ կարծր ու կտրուկ քայլերէն է նոյնիքն 5 մարտին տեղի ունեցած ներթափանցման գործողութիւնը»: Այս մասին «Նիւզ»-ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ ԶՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, Արցախի Զանրապետութեան Ազգային Ժողովի «Յայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար Արթուր Մոսիեան:

«Չեն բացառուիր, որ յառաջիկային նոյնպէս պիտի ըլլան այդպիսի սադրանքներ: Իսկ ատիկա կարելի է Յայաստանի այդ ԲԴ-ական ղեկավարութեան լուռ համաձայնութեան պայմաններուն մէջ: Երբեմն տպաւորութիւն կը ստեղծուի, որ Ալիեւն ու Փաշինեանը պայմանաւորուած կ'ընեն այս ամէնը», յայտնեց Մոսիեան:

Ա ն դ ր ա դ ա ռ ն ա լ ո վ ատրպէյճանական կողմի «առաջարկ»-ին, թէ Արցախը կա՛մ կ'ընդունի համարկումի քաղաքականութիւնը, կա՛մ պիտի ըլլան կարծր եւ կտրուկ քայլեր, Մոսիեան ըսաւ.



«Այսպիսի կտրուկ քայլերը պիտի յանգեցնեն մագլցումի, որովհետեւ արցախցիները իրենց ընելիքը արդէն ըսած են: Մենք որեւէ պարագայի չենք կրնար համարկուիլ Ատրպէյճանին: Արցախցիները իրենց արդէն լուծած է: Այս ամէնը Նիկոլի եւ իր վարչախումբի խիղճին վրայ է, որովհետեւ անոնք Արցախէն իրենց ձեռքերը լուացած են, եւ տպաւորութիւն է, որ Ալիեւի հետ միասին այս գործողութիւնները կ'ընեն»:

Արթուր Մոսիեան ըսաւ, որ արցախեան կողմը ատրպէյճանական կողմին հետ հանդիպումի գացած էր օրակարգային 4 հարցով, որոնց մէջ ներառուած էր Կաշէնի հանքավայրի վերաշահագործումը, ինչ որ մերժուած է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՓԱՍՏԵՐԸ ԿԸ ՎԿԱՅԵՆ, ՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՂԵԿՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՇՐԱՇԱՆՔԱԿՈՐՈՒՄ ՍԱԴՐԱՆՔ Է»

«Փաստերը կը վկայեն, որ ատրպէյճանական զինուոր ուժերուն կողմէ Լեռնային Ղարաբաղի մէջ իրականացուած ներթափանցումի յարձակումը նախապէս ծրագրուած եւ Ատրպէյճանի բարձրագոյն ղեկավարութեան կողմէ հրահանգուած սադրանք է», կը յայտարարէ պաշտօնական Երեւանը:

«Ատրպէյճանական ներթափանցող խումբի գործողութիւնները այլ կերպ, քան ահաբեկչութիւն, կարելի չէ որակել», նշուած է Յայաստանի արտաքին գործոց Նախարարութեան յայտարարութեան մէջ:

Ատրպէյճանի յառաջ քաշած պաշտօնական «վարկածը անհեթեթ է. անոնք չեն ներկայացուցած եւ չեն կրնար ներկայացնել այդ վարկածը ապացուցող ոչ մէկ փաստ ու հիմնաւորում», շեշտեց Յայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը՝ յիշեցնելով, որ ասիկա տեղի կ'ունենայ



Արդարադատութեան միջազգային դատարանէն կայացուցած որոշումից երկու շաբաթ չանցած, որով հերքուեցան Ատրպէյճանի այնդումները Յայաստանի կողմէ ականներու ենթադրեալ տեղադրումներուն վերաբերեալ:

Բացի ատկէ, պաշտօնական Երեւանը նշած է, որ Արցախի ուսուցանական ձեռքի տակ առկայ տեսանկյունը կ'ապացուցէ, որ ատրպէյճանական ներթափանցող խումբը յարձակած է «ՈԻԱԶ» մակնիշի փոքր հանրակառքի վրայ, որուն մէջ եղած են Լեռնային Ղարաբաղի Ներքին Գործոց Նախարարութեան չորս աշխատակիցներ, որոնք ծառայողական նպատակներով Ստեփանակերտէն կ'ուղղուէին Արցախի Զին Ըն եւ Մեծ Ըն գիւղեր:

«Ընդ որում, տեսանկյունները կը հիմնաւորեն, որ «ՈԻԱԶ»-ի մէջ բացի ծառայողական փաստաթուղթերէ եւ ուսուցանական գէնքէ տարբեր բան չէ եղած», անելուցած է արտաքին գործոց Նախարարութիւնը՝ ընդգծելով, որ վերջին շրջանին ատրպէյճանական կողմը նաեւ կրահերթեր բացած է Արցախի գիւղատնտեսական աշխատանքներ իրականացնող բնակիչներու վրայ:

«Սա անգամ մը եւս ցոյց կու տայ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման երաշխիքներու ու անոնց մէջ միջազգային ներգրաւածութեան անհրաժեշտութիւնը»:

Յայաստանի Զանրապետութիւնը կոչ կ'ուղղէ միջազգային հանրութեան, մեր շրջանին մէջ իրական խաղաղութեան հաստատումով հետաքրքրուած երկիրներուն եւ միջազգային կազմակերպութիւններուն՝ խստօրէն դատապարտելու ատրպէյճանական կողմի ուժի եւ ուժի սպառնալիքի կիրարկման, ինչպէս նաեւ լայնածաւալ ռազմական գործողութիւններ սադրելու հերթական դրսեւորումը եւ գործուն քայլերու ձեռնարկելու Ատրպէյճանի կողմէ իր իսկ միջազգային պարտաւորութիւններու հետագայ խախտումները բացառելու ուղղութեամբ:

Ստեղծուած պայմաններուն մէջ Բերձորի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ միջազգային փաստահաւաք խումբ գործողելը կը դառնայ կենսական անհրաժեշտութիւն», յայտարարած է արտաքին գործերու Նախարարութիւնը:

«ՀԱՅ ԴԱՏԱ ԱՅՍՕՐ» 14-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՎԸ ԱՄՓՈՓԵՅ ԻՐ ԵՐԿՕՐԵԱՅ ԲՈՎԱՆՊԱԿԱՅԻՆ ԵՒ ԸՆՊԱՅՆՈՒՄ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

«alikonline.ir» -3 Մարտին Թեհրանի մեջ իր աւարտին հասաւ «Յայ Դատը Այսօր» 14-րդ խորհրդաժողովը «Յայաստանը, Արցախը, Եւ Յարափոփոխ Տարածաշրջանը» խորագիրով, որ նախաձեռնած էր Յայկական Յարցերու Ուսումնասիրութեան Կեդրոնը (ՅՈՒՄԿ):

Ընդլայնուած խորհրդաժողով, որուն օրակարգին վրայ էին Յայաստանի, Արցախի եւ միջազգային քաղաքական, ընկերային-տնտեսական եւ բարոյաժողովրդական իրավիճակի քննարկումը, տարբեր մարտահրաւերներու գնահատումը, հայութեան զարգացման տեսլականի եւ այլ հարցերու մասին քննարկումները:

Երկօրեայ խորհրդաժողովը իր ընդլայնուած քննարկումներուն ընթացքին մասնաւորապէս անդրադարձաւ ՅՅ պարտուած իշխանութիւններուն վարած ապագային քաղաքականութեան աղետաբեր ըլլալու հանգամանքին, շարունակուող ամբոխավարական մօտեցումներու



հետեւանքներուն, Արցախի հարցը անտեսելու սպառնալիքներուն, «Խաղաղութեան Դարաշրջան» բանալու ՅՅ իշխանութիւններուն վարած քաղաքականութեան բովանդակային սնանկութեան, Սփիւռքի գործօնը անտեսելու հանգամանքին, հայ-իրանական գործակցութիւններու խորացման

անհրաժեշտութեան, ատրպէյճանա-թրքական տարածաշրջանային յաւակնութիւններու մարտահրաւերներուն եւ կարելի զարգացումներուն, գիտելիքահեռք տնտեսութեան զարգացման, ինչպէս նաեւ հայ-թրքական յարաբերութիւններու հարցին՝ հայաստանեան եւ սփիւռքեան քաղաքական եւ հասարակական մտքի ընկալումներուն, ինչպէս նաեւ՝ Ռուսիոյ տարածաշրջանային դերակատարութեան եւ այլ հարցերու:

Խորհրդաժողովի զեկուցաբերներն էին՝ ՅՅԴ Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան, ՅՅԴ Բիւրոյի անդամ, Բիւրոյի Յայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեան, «Ալիք»-ի խմբագիր-պատասխանատու Արամ Շահնազարեան, ազգային հասարակական գործիչներ՝ Արթուր Յովսէփեան, Նոէլ Միլասեան, ՅՅ Ազգային Ժողովի «Յայաստան» խմբակցութեան պատգամաւոր Աննա Գրիգորեան, Թեհրանի Յայոց Թեմի Առաջնորդ Ս. Մեպուհ Ա. Արք. Սարգսեան, ատրպէյճանազետ Անժելա Էլիպեղովա, իրանազետ Ահարոն Վարդանեան եւ քաղաքազետ Յրանդ Մելիք-Շահնազարեան:

Նախաձեռնութեան աւարտին Թեհրանի Յայ Դատի յանձնախումբի խօսքը արտայայտեց՝ Իսակ Իւնանեսեան, այնուհետեւ ՅՅԴ Իրանի հիւսիսային շրջանի ԿԿ խօսքը փոխանցեց Արամ Շահնազարեան, որուն յաջորդեց ՅՅԴ Բիւրոյի խօսքը, զոր ներկայացուց Կիրո Մանոյեան:

Խորհրդաժողովի աւարտին ելոյթ ունեցաւ Թեհրանի Յայոց Թեմի Առաջնորդ Ս. Մեպուհ Ա. Արք. Սարգսեան:

ԱՆԹԻԼԿԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅԻՆ ԿՈՂՄԵ ՆՈՒԷՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅԻ ԱՆՎԵՐՏՆԵՐՈՒՆ

Անթիլիասի Մայրավանքի կիրակնօրեայ դպրոցին կողմէ, Յալէպի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ», Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու բողբոջ դասարանէն



մինչեւ երկրորդ կարգի աշակերտներուն նուէրներ (պայուսակներ) բաշխուեցան:

Արդարեւ, հայրական օրհնութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Շաբաթ, 4 Մարտ 2023-ին, գլխաւորութեամբ Յալէպի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի ընդհ. տեսուչ Արժ. Տ. Տարեհ Զինյ. Շաբաթեանի, բողբոջ դասարանէն մինչեւ երկրորդ կարգի աշակերտներուն բաշխուեցան նուէրները (պայուսակները), որոնք ուրախութիւն պատճառեցին երկրաշարժին վախը ապրող սիրելի աշակերտներուն:

Այս առիթով, ի խորոց սրտի շնորհակալութիւն կը յայտնենք Անթիլիասի Մայրավանքի կիրակնօրեայ դպրոցի տեսչութեան եւ ողջ անձնակազմին, իրենց ցուցաբերած սիրոյ եւ եղբայրասիրութեան արտայայտութեան համար:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԸՆԹԱՅԻ ՄԵԶ Է

6 Փետրուարի երկրաշարժէն անմիջապէս ետք, Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը յառաջացուց երկրաշարժի արտակարգ իրավիճակի կեդրոնական մարմին մը, որ կը բաղկանար երկու յանձնախումբերէ: Առաջինը՝ վնասներու արձանագրութեան յանձնախումբ, իսկ երկրորդը բնակարաններու վնասներու ստուգման երկրաչափական յանձնախումբ, որուն նպատակն էր, այցելել վնասուած բնակարանները, ստուգել վնասները եւ ճշդել անոնց ապահովական վիճակը:



Յանձնախումբը գործի լծուեցաւ գործակցելով Յալէպի երկրաչափական սենտիքայի փորձաշու եւ մասնագետ երկրաչափներու հետ, յանձնախումբը ճշդեց նաեւ երիտասարդ երկրաչափներու խումբ մը, որպէսզի աշխատանքը արագ թափով ընթանայ:

Յանձնախումբը մինչեւ օրս ստացած է վնասուած բնակարաններու, շէնքերու եւ խանութներու 533 դիմում:

Ստուգուած բնակարաններուն մեջ արձանագրուած են անապահով բնակարաններ, վնասուած բայց ապահով բնակարաններ եւ շէնքերու սիւներու եւ կամուրջներու անմիջական նորոգութեան պարագաներ:

Այս բոլորը կարիք ունին շինարարական եւ նորոգման ծրագիրներու մասնագիտական պատրաստութեան եւ իրագործման:

Յալէպի քրիստոնեայ եկեղեցիներու համայնքապետներու խորհուրդի միջհամայնքային օժանդակութեան յանձնախումբը արդէն լծուած է համայնքներուն հետ բնակարանային նորոգութեան ծրագիրներու իրականացման առումով գործակցութեան աշխատանքին, ինչպէս նաեւ յառաջացուցած է վարձակալութեան գումար յատկացնելու ծրագիր մը, որպէսզի անբնակելի բնակարաններու բնակիչները տուն վարձեն ու ապահով մասն մինչեւ իրենց բնակարաններու վերաշինութիւնը:

Վնասներու արձանագրութիւնները տակաւին կը շարունակուին, իսկ վերաշինութեան աշխատանքները արդէն ընթացք առած են: Միջհամայնքային օժանդակութեան յանձնախումբը յառաջացուցած է մասնագետ երկրաչափներու յատուկ յանձնախումբ մը:

ՅԵՏ ԱՂԵՏԱԽ ԵՐԿՐԱՆՎԱՐԺԻՆ ՎԵՐԱԿՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԳԱԶԱԿՆԵՐՈՒ ԲԱՇՆՈՒՄ



Յայրական օրհնութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Շաբաթ, 4 Մարտ 2023-ին, Բերիոյ Յայոց Թեմի Նպաստից Մարմինը յետ աղետալի երկրաշարժին, վերարկուներ եւ գազակներ

բաշխեց ժողովուրդի գաւակներուն, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն Ներս:

Թող Ամենակալը անվտանգ եւ ապահով օրեր պարգեւ մեր ժողովուրդին:

ՄԵՐ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ԱՊԱՆՈՎ ՕՐԹԻՄԱՆ ԵՐԿՐԱՆՎԱՐԺԻ ՅԱՅՈՐԴՈՂ ՕՐԵՐՈՒՆ

6 Փետրուար 2023-ի եւ 20 Փետրուար 2023ի երկրաշարժներու յաջորդող օրերուն, Արամ Մանուկեան Ժող. Տունը, «Սահակ Նալպանտեան» սրահը, Զարէն Եփիէ Ազգ. Ճեմարանը, հայ առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու սրահները, այլ քրիստոնեայ եւ հայ եկեղեցիներու կողքին, ապաստան դարձան հալէպահայութեան:

Այս կեդրոններ ապաստանեցան աւելի քան 3000 հայորդիներ, մանուկներ, տարեցներ, ընտանիքներ:

Կեդրոններէն Ներս ապահովուեցան անոնց սնունդն ու կենցաղային բոլոր կարիքները: ՍՕ Խաչի դարմանատան բժիշկները այցելեցին այս կեդրոնները եւ անհրաժեշտ բժշկական ծառայութիւն ու դեղորայք ապահովեցին վատառողջ պարագաներու:

Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան մէկէ աւելի անգամներ այցելեց ու մխիթարեց ապաստանեալները՝ ուժ եւ կորով ներշնչելով անոնց:

Ակումբի մեր տղաքը, յատկապէս Սուրիոյ երիտասարդական Միութեան եւ Զրիստափոր Ուսանողական Միութեան անդամները արթուն պահակներ դարձան: Անոնք մինչեւ լոյս հսկեցին եւ ծառայեցին ժողովուրդին:

Ներկայիս «Սահակ Նալպանտեան» սրահ կը շարունակեն ապաստանիլ շուրջ 150 հայորդիներ:

Ծառայութիւնը կը շարունակուի, սկստի ունենալով շարունակուող յետցնցումներուն առթած մտահոգութիւնն ու տագնապը:

ՄԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԳԵՐԽՆԴԻՐԸ

Ռուս-ուլքրանական հակամարտության հարցում համաշխարհային լրատուամիջոցների զգալի մասը դեռևս գտնուում է ամբողջական վերահսկողության ներքո: Արտաքին աշխարհաքաղաքական, ինչպես եւ ներքին պատճառներով հասարակություններին ներշնչում են, որ Ռուսաստանը պարտուում է պատերազմում, ինչն այս պետության համար ունենալու է խիստ բացասական հետեւանքներ: Այս քարոզչությունն առանձնապես նշանակալից է ունի նախ եւ առաջ ուլքրանացիների համար (յիշե՛ք 44-օրեայ պատերազմի օրերին մեկ աղբիւրից հայ հանրությանը մատուցող տեղեկատվությունը), այնուհետեւ նախկին խորհրդային միւս հանրապետությունների համար, որոնք դրական կամ բացասական առումով անմիջական փոխադարձությունների մէջ են



Ռուսաստանի հետ: Կասկած չկայ, որ նրանք, որոնք այս հակամարտության մէջ Ուլքրանիայի հովանաւորներն են, մի օր թիկունք կը դարձնեն պարտուած երկրին՝ լքելով ակտիւների վրայ յայտնուած բախտախնդիր ղեկավարներին: Մինչ այդ նրանք ջանք են գործադրում ինչպես յետխորհրդային տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում թուլացնելու Ռուսաստանի ազդեցութիւնը, ստեղծելու նրա առջեւ նոր մարտահրաւերներ: Այդ նոյն նպատակով նշուած երկրների ժողովուրդներին փորձում են հաւատացնել, որ իմաստ չունի պարտուած Ռուսաստանի՝ որպէս դաշնակցի հետ հետագայ յոյսեր կապել, հետեւաբար պետք է փնտռել այլընտրանքներ: Վերջերս Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիայաշուիլին յայտարարեց, թէ Ուլքրանիան ցանկանում է, որ Վրաստանը երկրորդ ճակատ բացի Ռուսաստանի դէմ, եւ որ՝ այդ նպատակով էր Սահակաշուիլին ուղարկուել Վրաստան:

Իրենց յատուկ ճարպիկութամբ Ատրպէյճանն ու Թուրքիան Արցախի դէմ 44-օրեայ պատերազմը, ինչպես եւ դրան հետեւած Յայաստանի ու Արցախի դէմ կոշտ ճնշումները Արեւմուտքում ներկայացնում են որպէս Ռուսաստանին հարուածելու եւ Անդրկովկասից դուրս մղելու ծրագիր: Ի հարկէ ե՛ւ Թուրք-ատրպէյճանական գոյգը, ե՛ւ Արեւմուտքը հրաշալի հասկանում են, որ տարածաշրջանի իրենց դաշնակիցները հետապնդում են փանթուրանիզմի դարաւոր երազանքը, եւ որ Ռուսաստանի առջեւ Անդրկովկասի դռները փակելու, այստեղ ռազմաքաղաքական գերիշխանութիւն հաստատելու դերակատարը դարձեալ իրենք չեն լինելու, այլ՝ Թուրքիան եւ Ատրպէյճանը, սակայն այսօր առաջնային գերխնդիրը կոշտ պայքարն է՝ սահմանափակելու Ռուսաստանի ազդեցութեան գոտին:

Ելնելով այս իրողութիւններից՝ ի՞նչ պետք էր անել եւ ի՞նչ է անում Յայաստանի ղեկավարութիւնը: Յայաստանի իշխանութիւնը բացայայտորէն որդեգրել է հակառուսական գործելակերպ եւ համախոհ է նրանց հետ, որոնք այսօր ջանում են կլանել Արցախը եւ Յայաստանին զրկել ինքնիշխանութեան ու հզօրանալու հեռանկարից: Այսինքն Արեւմուտքի ծրագրերին համապատասխան՝ Ատրպէյճանի ու Թուրքիոյ որդեգրած քաղաքականութիւնը նրանց փոխարէն յաջողութեամբ իրականացնում է Յայաստանի քաղաքականապէս անզրագէտ, իսկ ակտիւ ստոյգ՝ արտաքին կաշկանդումների ենթակայ իշխանութիւնը: Ատրպէյճանի ու Թուրքիոյ ցանկութիւնն այն է, որ Ռուսաստանը միջնորդ չլինի հայ-ատրպէյճանական բանակցութիւններում: Յայաստանը կատարում է նրանց ցանկութիւնը՝ մերժելով ռուսական միջնորդութիւնը եւ գործընթացն աստիճանաբար հասցնելով այն կետին, որ առհասարակ միջնորդներ չլինեն իրենց եւ թշնամի հարեւաններին հետ շփումների ժամանակ: Ատրպէյճանը շրջափակելով Արցախն ու անընդհատ ճնշումներ գործադրելով թէ՛ Արցախի եւ թէ՛ Յայաստանի վրայ, ըստ էութեան, փորձում է շահերի այս եռանկիւնուց դուրս բերել իր նպատակներին խոչընդոտող Ռուսաստանին, սակայն առերեւոյթ շարունակում է բարեկամական ժեստեր անել նրան՝ խաղարկելով տնտեսական եւ այլ գործոններ:

Իսկ Յայաստանի իշխանութիւնը, ըստ էութեան, շրջանցում է Ատրպէյճանի հակահայկական ու հակառուսական յարձակողապաշտ քաղաքականութիւնը եւ եռակողմ յարաբերութիւնների մէջ թիրախ է դարձնում Ռուսաստանին՝ մեղադրելով պարտաւորութիւնները չկատարելու մէջ: Յայտնուում ենք մի իրավիճակում, երբ Արցախի հայկականութիւնն երաշխաւորող Ռուսաստանի հետ բազմաթիւ թելերով շաղկապուած լինելով՝ Յայաստանը ուղղում է դէպի հակադիր ճամբար, իսկ Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը վիճարկող, Ուլքրանիային ռազմական գնազան օժանդակութիւններ տրամադրող, միջազգային կազմակերպութիւններում ընդդէմ Ռուսաստանի քուէարկող Ատրպէյճանը

իբր թէ արեւմտեան միջամտութեանը ընդդիմացող նոյն ճամբարում է Ռուսաստանի հետ, ինչն այս ճակատագրական պահին խիստ կարեւոր է վերջինիս համար: Յայաստանի իշխանութիւնները հրաժարուելով Արցախի շահերը պաշտպանելուց եւ Յայաստանի անվտանգութեան ապահովման պարտականութիւններից՝ խիստ հետեւողական են այդ շահերը չպաշտպանելու մէջ Ռուսաստանին մեղադրելու հարցում: Նրանք բուն նպատակը հայ ժողովրդի մէջ հակառուսական տրամադրութիւնների բորբոքումն է, ժողովրդին համոզելը, որ Արեւմուտքից պարտուող, Յայաստանի նկատմամբ պարտականութիւնները չկատարող Ռուսաստանի հետ հեռահար հաշուարկներ անելն անիմաստ է, եւ այլ ելք չկայ՝ բացի արեւմտեան այլընտրանքից, իսկ ակտիւ ստոյգ՝ Արեւմուտքին այստեղ ներկայացնող Թուրք-ատրպէյճանական գերիշխանութիւնից: Արցախի շրջափակման դէմ ոչինչ չնախաձեռնող իշխանութիւնը վաղը միջանցքի պատրուակով տարածք է զիջելու իր թշնամիներին՝ այն ներկայացնելով որպէս արցախցիների փրկութեան միակ միջոց, Յայաստանից եւս տարածքներ է զիջելու Ատրպէյճանին՝ ներկայացնելով որպէս մնացածը փրկելու եւ տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու ելք: Յայաստանի իշխանութիւնները զայրացած ու զարմացած բացազանցում են. «Դուք ցանկանում էք, որ 3 միլիոնանոց Յայաստանը հակադրուի՞ 100 միլիոնանոց Թուրք-ատրպէյճանցիներին՝ լռելով այն հարցում, թէ իրենց դիւերին հարեւանների ցանկութիւնները չբաւարարելու դէպքում որքան է զիջելու Յայաստանը՝ հաշուի առնելով նաեւ այն հանգամանքը, որ երեք երկրների բնակչութեան թուաւոր համեմատութիւնը յօգուտ մեզ չի փոխուելու»:

Երբ պատերազմող երկիրը ղեկավարում են դասալիքները, տրամաբանական է այն, ինչ տեղի է ունենում Յայաստանում: Նիկոլ Փաշինեանի խմբակը իշխանութեան է եկել արդէն իսկ Յայաստանի թշնամիներից հոգեբանօրէն պարտուած: Դրանով էին նաեւ պայմանաւորուած ի սկզբանէ նրանց ինչեցրած անհեթեթ յայտարարութիւնները՝ արցախեան պատերազմում անիմաստ զոհերի, թշնամի երկրի կիրթ ղեկավարի, այդ ղեկավարի կնոջ հետ մուղամ լսելու, ռազմահայրենասիրական դաստիարակութեան հիմնադրոյթները դարձնելուց հանելու, ազգային կրթական չափորոշիչներից հրաժարուելու եւ նման այլ բաների մասին:

Յայաստանի չորրորդ իշխանութեան անցած ճանապարհը կրկնում է առաջին իշխանութեան անցած ուղին: Արցախեան պայքարից հրաժարուելու, ամէն գնով խաղաղութեան հասնելու, աշխարհաքաղաքական բեւեռից բեւեռ ցատկոտելու ճիգերն ի վերջոյ կանգնեցրին նրանց ու նաեւ մեր երկիրը աշխարհաքաղաքական փակուղու առջեւ: Արցախեան շարժման առաջնորդ, Յայաստանի առաջին նախագահի բազմաթիւ յօդուածներում ուրուագծուում էր աշխարհաքաղաքական պատկերը, նրա նախանշած հեռանկարը բոլոր դէպքերում փակուղի էր տանում, եթէ Յայաստանն ամէն գնով չստորագրէր խաղաղութեան պայմանագիր: Մարդիկ, որոնք իրենց էութեամբ ու համոզմունքներով չեն հաւատացել հզօր, անկախ Յայաստանի հեռանկարին, կաշուից դուրս են եկել եւ դուրս են գալիս Յայաստանի ճակատագիրը տնօրինելու համար:

ՀՀ առաջին նախագահի հետ տեղի ունեցածի պէս, նրա հոգեզաւակի համար եւս խուսաճաւելու դաշտն աստիճանաբար ներառում է Պարզ ունեց, որ Ռուսաստանը ոչ միայն չի կործանուում, այլեւ չի պատրաստուում լքել տարածաշրջանը, որի նկատմամբ նրա ճնշումը առաջիկայում ամենայն հաւանականութեամբ մեծանալու է:

Յայաստանին ու Արցախին անցած դարի 90-ականների վերջին աշխարհաքաղաքական փակուղուց դուրս բերեց իշխանափոխութիւնը:

Յայաստանի իշխանութիւնը, որը բազմաթիւ անօրինականութիւններ ու յանցանքներ է գործել իր երկրի ու ժողովրդի նկատմամբ, սարսափում է իշխանափոխութեան մտքից: Չունենալով սկզբունք եւ հայրենասիրութեան զգացում՝ նա պատրաստ է լինելու, ըստ նժարի ծանրութեան, ցանկացած զիջումների արտաքին ուժերին: Կը փրկի կաշին, թէ այն կը չորանայ ոսկորների վրայ, ինչպէս պատահեց մեկ այլ օգտագործուած ու դէն նետուածի՝ Սահակաշուիլու հետ, մեզ համար ոչ մի կարելուութիւն չունի: Գերխնդիրը Արցախ-Յայաստանն է ու նրա փրկութիւնը:

Յ. Գ. - Փետրուար 16-19 Նիկոլ Փաշինեանը մասնակցեց Միւնիխի խաղաղութեան համաժողովին, որի ընթացքում տեղի ունեցաւ նաեւ բաց քննարկում-բանալիք Յայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդների միջեւ: Համաժողովի խորապատկերին ակնյայտորէն դրսեւորուեց Յայաստանի ղեկավարի քաղաքական խեղճութիւնը, նրա անկարողութիւնը, իսկ գուցէ եւ ցանկութեան բացակայութիւնը՝ պաշտպանելու Յայաստանի ու Արցախի շահերը: Երբ Ատրպէյճանի ղեկավարը հայկական կողմին մեղադրում է Ատրպէյճանի տարածքների բռնագրաւման, ռազմական այլ յանցագործութիւնների մէջ, իսկ Յայաստանի առաջնորդը չի կարողանում, վախենում է, կամ միտումնաւոր չի խօսում Ատրպէյճանի սանձազերծած պատերազմի, բազմազան յանցագործութիւնների եւ շարունակուող շրջափակման մասին, այլեւս միեւնոյն է, թէ որո՞նք են դրա դրդապատճառները: Երբ սրան գումարում է նաեւ Թուրքիոյ արտգործնախարարի կողմից, արդէն այդ երկրի տարածքում, Յայաստանի արտգործնախարարին ներկայացնող ակնյայտ պահանջները, մասնաւորապէս՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւններ հաստատելու համար Ատրպէյճանի ներկայացրած պահանջների բաւարարման մասին, կասկած չի մնում, թէ Յայաստանի դրածոյ իշխանութիւնը ի՞նչ ծրագիր է իրականացնում եւ դէպի ո՞ր է առաջնորդում հայ ժողովրդին: Յայաստանի վերջի բեկորները Թուրք-ատրպէյճանական նոր ստրկութեանը ենթարկելու նպատակը հնարաւոր է ձախողել միայն ազգադաւ իշխանութեան դէմ համաժողովրդական պայքարի ճանապարհով: Իշխանափոխութեան ձգձգումը կարող է անիմաստ դարձնել դրա անհրաժեշտութիւնը:

«Դրօշակ»-ի Առաջնորդ

ՀԱԼԵՊԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՆ ԵՏՔ

Սոնա Չամպագճեան-Ճարպիկեան

Երկուշաբթի, 6 Փետրուար 2023-ի վաղ առաւօտեան ժամերուն Սուրբիոյ հիւսիսային քաղաքները յատկապէս Հալէպը ենթարկուեցաւ ահաւոր երկրաշարժի:

Անցնող տասը տարիներուն սուրիական պատերազմի արհաւիրքը տակաւին չթօթափած, այս անգամ հալէպահայութեան կը սպառնար բնութեան աղէտը, պատճառելով նիւթական ահաւոր վնասներ, տնագուրկ դարձնելով հազարաւոր քաղաքացիներ:

Առաջին երկրաշարժին յաջորդեց երկրորդը, ապա տասնեակ մը յետնցումներ, որոնց պատճառով Հալէպի բնակչութեան մեծամասնութիւնը խուճապահար փողոց իջաւ անձրեւին եւ ցուրտին ապահով վայրեր փնտռելու:

Հայկական կեդրոններու, եկեղեցիներու սրահները լայն բացին իրենց դռները, նաեւ դպրոցի փոխադրակառքերը տրամադրուեցան եւ երկրաշարժի ցնցումը ապրող բնակչութիւնը ապահով վայրեր ապաստան գտան:



Տասնեակ տարիներէ ի վեր Սուրիան նման ցնցումի չէր ենթարկուած:

Երկրաշարժին յաջորդող առաւօտեան վաղ ժամերուն, երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կոչնակը կը զօղանէր, Արժ. Տ. Մաշտոց Ա. Քիւյ. Արապաթեան եկեղեցւոյ դռները բացաւ եւ ընդունեց վախի եւ սարսափի մատնուած ժողովուրդը:

Եկեղեցւոյ մէջ Տէր Հայրը մինչեւ առաւօտ աղօթքներով, շարականներով, հոգեւոր երգերով յոյս ներշնչեց:

Ապա յետմիջօրէին, քահանայ հայրը ամբողջ Սաղմոսացը ընթերցեց: Իսկ իրիկուան եկեղեցի այցելեցին Հոգեշնորհ Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Բերիոյ Թեմի Ազգային Վարչութեան անդամները:

Եկեղեցւոյ մէջ 170 հոգի ապաստանած էր: Անոնց համար ապահովուեցան կենցաղային բոլոր պայմանները: Մեր ակումբներու երիտասարդները բաժնեցին ծածկոցներ, ակրատներ: Ազգային Վարչութիւնը եւ պատասխանատու կողմերը սննդեղէն ապահովեցին: Շտապի տղաքը օգտակար դարձան առողջապահական պարագաներ ունեցողներուն: Երիտասարդ կամաւորները պահակութիւն ըրին հայաբնակ շրջաններուն եւ եկեղեցւոյ մէջ:

Մենք երախտապարտ ենք նաեւ այդ տղոց արթուն աչքերուն: Երեքշաբթի, երեկոյեան Բերիոյ Հայոց Թեմի Բարեշնչ Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեան գորակցական այցելութիւն տուաւ եկեղեցւոյ մէջ ապաստանած հայորդիներուն, որոնք համախմբուած են երկրաշարժի վտանգէն պաշտպանուելու համար:

Սրբազան հայրը իր հայրական օրհնութիւնն ու գորակցութիւնը յայտնեց հայորդիներուն, զօտեպնդեց զիրենք եւ աղօթեց, որ երկրաշարժի աղէտը վերջ գտնէ եւ մաղթեց, որ դժուարին պայմաններուն մէջ աղօթքով



մեր սերն ու կ ա պ ու ա ծ ու թ ի ն ը արտայայտենք իրարու նկատմամբ եւ հաւատքով գօրացած յաղթահարենք մեր առջեւ ծառայող բոլոր դժուարութիւնները:


Եկեղեցւոյ մէջ մեր ժողովուրդի գաւակները իրենց հացն ու ջուրը բաժնեցին արաբ ժողովուրդին գաւակներուն հետ:

Այսօր Սուրիոյ, ի մասնաւորի Հալէպի հսկայ շէնքեր աներակի վերածուած են: Կարիքները մեծածաւալ ու բազում են: Տնտեսական վնասները՝ մեծ: Երկրաշարժը ցնցեց Հալէպ քաղաքը, խլրտեց կեանքը՝ մանուկին, պատանիին, երիտասարդին ու երեցին, միաժամանակ գօրաշարժի ենթարկելով համայն մարդկութիւնը, նամանաւանդ սփիւռքահայութիւնը:

Երկուշաբթի, 20 Փետրուարի երեկոյեան դարձեալ երկրաշարժ մը ցնցեց Սուրիան, որուն պատճառով ժողովուրդը կրկին վերապրեցաւ այդ մղձաւանջը: Հայ ժողովուրդը անգամներ ապրած է նման աղէտներ, բայց երբեք չէ կորսնցուցած արեւելու ոգին, տոկալու կորովը:

Պայքարող ժողովուրդ ենք, յոյսով ենք որ հալէպահայութիւնը այս տագնապը պիտի շրջանցէ շնորհիւ իր գոյատեւելու կամքին:

ՆԺԴԵՆ ԴԱՐՁԵԱԿ ԿՐ ՀՐԱԲԻՐԷ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ



Արփի Գեորգեան

Շուրջ 70 տարի ետք Սիւնիքի հրամանատարը դարձեալ կը համախմբէ իր գաղափարակից ընկերները: Սիւնիքէն կը լսուի Նժդեհին կանչը եւ 6 Յունուար 2023-ին Երեւանի մէջ ՀՀԴ երիտասարդական համագումարի մեկնարկը կատարելէ ետք՝ իրենց առաքելութեան նկատմամբ լրջախոհ ընկերները կը մեկնին Գորիս:

Հայրենիքի մէջ ՀՀԴ երիտասարդական առաջին ձեռնարկն էր, որուն ներկայ գտնուեցայ: Խանդավառուած էի... Երբ սրահ հասանք, առաջին անգամ համագումարի պատասառը ուշադրութիւնս գրաւեց: Անոր վրայ տարբեր երկիրներէ համագումարին մասնակցող ՀՀԴ ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միութիւններու խորհրդանշաններն էին, ինչպէս նաեւ համագումարի կարգախօսը, որ կը ներկայացնէր Գ. Նժդեհի



հանրածանօթ խօսքը «Եթէ կ'ուզես գուշակել ազգի մը ապագան, նայիր անոր երիտասարդութեան»: Համագումարի միտքը պարզ էր արդէն՝ լուսարձակը կը դրուէր ազգի ապագան կերտելու գործին մէջ երիտասարդի դերին վրայ: Համագումարի բացումին տեսայ բոլոր ընկերներն ու ընկերուհիները, որոնց ծանօթ էի հեռուստացոյցէն կամ ընկերային ցանցերէն, երբ անոնք կը մասնակցէին յանուն հայրենիքի փրկութեան ցոյցերուն եւ ոչ մէկ ջանք կը ինսայէին գարթնեցնելու ժողովուրդը՝ հայրենիքն ու ազգը սպառնացող վտանգներուն առաջը առնելու: Այնտեղ էին նաեւ բոլոր այն ընկերները, որոնք նոյն ցոյցերու ժամանակ բերման ենթարկուեցան, ձերբակալուեցան եւ ամիսներով բանտերու մէջ մնացին: Ահա անոնց պայքարի ոգին չէր մարած, հակառակ բոլոր դժուարութիւններուն ու արգելքներուն անոնք կրկին կը գտնուէին պատնէշի վրայ, կրկին Արցախի ձայնը բարձրացնելու եւ հասցնելու աշխարհի տարբեր անկիւններ:

Ֆիզիքապէս բացակայ էին անոնք, որոնք 2020-ի Արցախի քառօրեայ պատերազմին իրենց ամենաթանկը գոհեցնելով պաշտպանեցին հայրենիքը, նաեւ անոնք, որոնք մուտքը Հայաստան արգիլուեցաւ՝ հայ ազգին ձայնը բարձրացնելու եւ Արցախի Ատրապէճանի բաժին դառնալով մերժելու իրենց կեցուածքին համար:

Ընկերներէն տեղեկացայ, որ համագումարը պիտի կայանար Արցախի մէջ, սակայն որովհետեւ երկու ամիսէ ի վեր Արցախը կը գտնուի շրջափակման մէջ, վայրը տեղափոխուած է Սիւնիք: Բացումին Արցախի ընկերները հեռաուղեգրով յայտնեցին իրենց պատգամը հաստատելով, որ թէեւ ֆիզիքապէս ներկայ պիտի չըլլան, սակայն պիտի պայքարին ամեն միջոցներով պահելու հայրենիքն ու հայու ինքնութիւնը:

Ողջունելի էր համագումարի վայրը տեղափոխել Սիւնիք: Ինչո՞ւ Սիւնիք: Որովհետեւ Սիւնիքը նոյնքան կարեւոր դիրք ունի եւ նոյնքան կարեւոր է պահպանել անոր հայկական ինքնութիւնը, որքան Արցախինը: Սիւնիքն ու անոր միջանցքը կը հանդիսանան փանթօրքի գաղափարի իրականացման արգելքը: Թշնամին մինչ օրս կը պայքարի գրաւելու համար այդ միջանցքը, հետեւաբար մեր պարտականութիւնն է Արցախի հետ միասին մեր ուշադրութիւնը դարձնել նաեւ դէպի Սիւնիք:

Չիս ամենէն անելին գրաւեց տիրող մթնոլորտը, աշխարհի տարբեր կողմերէ ժամանած, սակայն նոյն գաղափարին հաւատացող ու ծառայող ընկերներու գրոյցը ոգեշնչող էր: Կը կարծէի, թէ իւրաքանչիւր երկրի երիտասարդութիւն միայն իր մտահոգութիւններով տարուած է, սակայն ո՛չ, գլխաւոր մտահոգութիւնը մէկ էր՝ Արցախը, իսկ գաղափարը՝ պայքարիլ հասնելու մեր նպատակին՝ Արցախի եւ Սիւնիք հայրենիքներու վերելքին եւ այդ ուղիով ազատ, անկախ եւ միացեալ հայրենիքին:

Գարեգին Նժդեհի շունչը կը թելածէր սրահին մէջ: Կասկած չունիմ, որ համագումարին եւս Նժդեհեան գաղափարախօսութեամբ, վճռականութեամբ ու արիւթեամբ օրակարգէր սերտուեցան եւ բանաձեւեր ամրագրուեցան: Անհամբեր պիտի սպասենք համագումարի աշխատանքներու ամփոփումին:

Պրիսմակետ

ԱՆՃԵԼԱՆ



Մարուշ Երամյան

Կը կարդամ Սալար Ապտոյի ականատեսի նկարագրութիւնը Իրաքի պատերազմին եւ կը զգամ թէ ի՞նչ դժուարութեամբ իւրաքանչիւր բառը, կարծես արիւնելով գինք եւ արիւնելով ինքզինք, դուրս եկեր է գրիչէն եւ փռուեր տողին, էջին:

Դժուար է պատերազմի մասին գրելը, որովհետեւ որքան ալ գրելը ներշնչումի, մղումի արդիւնք է, նոյնքան սակայն միտքի արդիւնք է, մտածումին միջոցով գրուածը գրուելէն առաջ իսկ խմբագրելու արդիւնք է. միայն Փարիզի մէջ էր, որ համաշխարհային երկու պատերազմներուն միջեւ ինկած ժամանակահատուածին, գրողները կը կիրարկէին Automatic writing-ը (ընդհանրապէս թմրանիւթի մը ազդեցութեան տակ, ենթացիտակիցին յանձնուած գրել):

Տակաւին չէինք սորված պատերազմին հետ ապրելու տրամաբանութիւնը, - կա՞յ ատիկա արդեօք, երբեւէ եղա՞ծ է, - եւ ահա վրայ հասաւ երկրաշարժը եւ, ճիշդ պատերազմին պէս, կարծես տակաւին աւարտ չունի, կրկին ու կրկին կը ցնցուի հողը, մեզ ալ հիմերէն ցնցելով:



Ինչպէ՞ս գրես պատերազմին մասին, ինչպէ՞ս գրես երկրաշարժին մասին, երբ ամբողջ շիղերդ կը զգան արհաւիրքը, բայց միտքդ կը մերժէ ընդունիլ: Կը տեսնես իւրաքանչիւր ինկող ու պայթող արկ, իւրաքանչիւր փուլ եկող կառոյց, եւ կը զգաս փլուզումները ներքին թէ արտաքին, բայց ... չես ուզեր հաւատալ, որ մարդը կրնայ այսքան անամրոկային ըլլալ, բնութիւնը կրնայ այսքան անողորմ ըլլալ:

Մէկ ձեւ կայ կ'երեւի՝ նոյն փլուզուած վիճակով գրել, կամ փլուզուիլ եւ լռել:

Երկու պարայագային ալ սակայն ներքին փլուզումը կը դառնայ արծագանգը արտաքին փլուզման, կամ հակառակը, որ անտանելիօրէն նոյնքան ճիշդ է:

Այնտեղ էի, մէջտեղը ինկած եւ ինկող ռումբերուն, մէջտեղը սփռուած լրատուութիւններու ցանցերուն, մէջտեղը իմ շվորանքիս, որովհետեւ որքան ալ հարցադրումներու ճիշդ ձեւակերպի, կը մնար անհեթեթը, որ կը շրջանցեր բոլոր հարցադրումներս եւ անկիւնէ մը, անսպասելի վայրկեանի մը կը յայտնուէր, իր քրքիչին ծայրայեղ թոյլը քիթիս-բերնիս սփռելով:

Տարիներով, դարերով այս քաղաքին մէջ ապրեր էին կողք կողքի իսլամներն ու քրիստոնէաները, որոնց մէջ մեծամասնութիւն էին հայերը, յետոյ կու գային «քաթոլիկները»:

- Ի՞նչ էք:
- Քաթոլիկ:
- Դաւանանք չեմ հարցներ, ազգութեամբ ի՞նչ էք:
- Քաթոլիկ, - կը կրկնեն եւ այնպէս մը կը նային, որ ըսել ուզեն՝ «Այդքա՞ն յիմար ես որ չես հասկնար»: Ահա թէ ինչո՞ւ հայերը շատ աւելի մօտ կը զգային իսլամներուն, քան՝ քաթոլիկներուն, որոնցմէ շատերը դաւանափոխ հայեր, վաղուց մոռցած էին իրենց արմատները, ազգութիւնը, աւելի կարեւորը՝ ինքնութիւնը:

Թերեւս երկու տասնամեակ առաջ էր, որ իտալացի Անճելա Չաֆֆարոնիսի Յալէպ եկեր էր իր ընկերաբանական թեզը պատրաստելու, որուն նիւթն էր՝ «Քրիստոնէայ փոքրամասնութիւն մը, իսլամ քաղաքի մը մէջ. Յայերը Յալէպի մէջ»:

Այն օրերուն օրինակ էինք, յաջողութեամբ պաշտպանուած թեզի մը գլխաւոր նիւթն էինք: Այսօր գաղթական ենք:

Ճիշդ է որ Անճելան 1/8-ով հայ էր, այսինքն հայ եղած է իր մօրը հայրը, որ Ուրֆայէն գաղթեր է մինչեւ ճամայիքա (այդ օրերուն այդ մարդը ուրկէ՞ գիտեր որ նման երկիր մը գոյութիւն ունի եւ ուրկէ՞ գտեր էր հոն երթալու ճամբաներն ու միջոցը): Ճիշդ էր նաեւ, որ Յալէպի մէջ հեռաւոր ազգականներ ունէր, որոնք զինք հիւրընկալէր էին: Բայց Անճելան հայերէն չէր գիտեր եւ կարծեմ քիչ բան գիտեր հայերուն մասին:

Ասիկա ամիթ կը դառնայ, որ մայրս, երբ կը լսէ Անճելային Յալէպ գալուն եւ ընտանիքին պատմութիւնը, կրկին յիշէ եւ բիրտբորդ անգամ պատմէ (թերեւս թաքուն ափսոսանքը ջրելու համար), թէ Ազնիւ մօրաքոյրին ամուսնին մէկ ազգականը, ուրֆացի երիտասարդ մը, որ ճամբան (հաւանաբար աղբիւրի ճամբուն վրայ) աղջիկ մը կը տեսնէ, շատ կը հաւնի, ծնողքին կ'ըսէ, աղջիկ ուզելու կ'երթան, աղջիկը կ'ամենէ, պսակի օր կ'որոշեն: Պսակին օրը երիտասարդ փեսան կը դիտէ կարմիր ու թանձր

քօղով ծածկուած հարսը ու կը մտածէ՝ «Բայց իմ տեսած աղջիկս աւելի երկար չէ՞ր» ...

Արարողութիւններէն եւ խրախճանքէն ետք տուն կ'երթան, փեսան կը վերցնէ հարսին քօղը եւ ի՞նչ տեսնէ ... Իր տեսած աղջկան փոխարէն անոր մեծ քոյրը հարս տուեր են իրեն:

Հանդարտօրէն ետ կ'իջեցնէ քօղը հարսին դէմքին, դուռը կը բանայ եւ կ'երթայ ...

Այդ երթալն է: Տասնամեակներ ետք Հնդկաստանի չեմ գիտեր ո՞ր քաղաքին փաստաբաններէն մէկէն նամակ մը կը հասնի՝ «Եկէ՛ք, տէր եղէ՛ք ձեր ժառանգիս»:

Ուրֆացի փեսան Հնդկաստան հասեր, հոն ապրեր, աշխատեր եւ հսկայ հարստութեան մը տէր դարձեր է: Ըստ երեւոյթին չէ ամուսնացեր, որ այդ ժառանգը ամբողջ մնացեր է արդէն Յալէպ ապրող իր ազգականներուն:

-Ոչ մէկը ուզեց երթալ, մանաւանդ որ հարստութիւնը դուրս հանելու միջոց չկար. պէտք էր հոն ապրիլ եւ վայելել գայն ... մարդ չգնաց եւ հարստութիւնը մնաց Հնդկաստանի պետութեան ... - կը վերջացնէ մայրս:

Անճելան Յալէպի մէջ գտեր էր իր տոհմին 1/8-րդ հայ ազգականները, որոնք մեծ ուրախութեամբ հիւրընկալէր էին զինք, միաժամանակ գոհացում տալով իրենց անյագ հետաքրքրութեան:

-Հազիւ հեռաձայն մը ստանամ, ամբողջ ընտանիքը կը շարուի կողքիս, սպասելով թէ ի՞նչ պիտի ըսեմ ... Հիմա արդէն շատ լաւ կը հասկնամ ուրֆացի մեծ-հայրիկիս փափաքը հայկական շրջապատէն հեռանալուն, եւ այդքա՞ն հեռանալուն:

Անճելային մեծ հայրիկը ճամայիքայի մէջ կը հանդիպի իր ամերիկացի կնոջ, որուն հետ Իտալիոյ մէկ փոքր քաղաքը կայք կը հաստատէ, ամուսնանալէ ետք:

Այս բոլորը կրնայի մոռնալ, եթէ Արցախի 44-օրեան տեղի ունեցած ջրլլար: Բայց տեղի ունեցած է, իւրաքանչիւր հայու ետեւեւ մէջ շատ խորունկ պարապ մը ձգելով: Այդ պարապը երբեմն բարկութեամբ կը լեցուի եւ կ'եռայ, հեքիաթներու կրակէ լիճին պէս, ուրիշ անգամներ յուսահատութիւնը կը լեցուի հոն որպէս թանձր մտախուռ ... ամենէն ծանրը սակայն անոր պարապութիւնն է, որ անասելի ծանրութեամբ կը ճնշէ: Կը զգանք որ պատը, որուն կռթնած էինք եւ ապահով կը զգայինք, փլած է եւ հիմա պարապին մէջ կը լողանք:

Թերեւս եթէ սկիզբէն իսկ Սփիւռքին տրուած ըլլար իր արժանի կարեւորութիւնն ու տեղը, այսօր այս պարապը չէր կլաներ մեզ:

Անճելան իր թեզը պաշտպանեց, շատեր ծանօթացան հայերուն, Յալէպի՝ հայերուն, - որոնց պատմութիւնը, կ'ըսեն, կ'երկարի մինչեւ Տիգրան Մեծ աշխարհակալ արքան, - յետոյ գնաց ապրիլ իր կեանքը, ամուսինին եւ երկու զաւակներուն հետ:

Քանի՞ քանի անճելաներ կան սփիւռքի տարածքին, որոնց գոյութիւնը, թիւը, ներոյժը պիտի գօրացնեն, հզօրացնեն մեզ, Սփիւռքը, ամուր կապերով անջնջելով Հայաստանին, որպէս մէկ ուժիւնսին երկու ափերը:

Այդպէս չէրաւ սակայն: Սփիւռքը մնաց վառող-մարող լոյսերով ծառը, իր մարդը է նոր կազմուող գաղութներով:

Թիւ ունինք, - շատ աւելի, քան Հայաստանի մէջ, - հարստութիւն ունինք, կարողութիւններ ունինք հասնելու միջազգային քաղաքական հարթակներ, բայց ...

Այդ «բայց»-ը կայ. գլուխս կը պայթի հասկնալու համար թէ ի վերջոյ ո՞ր է մեր ուժին գաղտնիքը, որովհետեւ ուժը կա՞յ, ինչպէս ըսի, բայց անոր արդիւնքն է որ չկայ կարծես:

Ո՞ր է մեր ուժը, հարց կու տամ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիվբօջեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զայօղեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիվբօջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրա-շարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:



ՄԻ՝ ՅՈՒՍԱՐԱՏԻՔ



Ժենի Մխսեան

Որքան տագնապալի էր ահռելի ցնցումներն եւ պոռչուքներն արթննալով:

6 Փետրուար 2023-ի առաւօտեան ժամը 4:15-ին սոսկալի երկրաշարժ մը պատահեցաւ Սուրիոյ մէջ:

Այդ պահուն միայն կը լսուէր ժողովուրդին զԱստուած կանչելու ձայնը, բոլորը դուրս կու գային տուններէն իրենց հոգիները ազատելու:

Որքան դժուար է այդ պատկերը բացատրել գրութեամբ. ժողովուրդին վախը, ծերերուն ուժասպառ վիճակը եւ փոքրիկներուն լացը:

Թեւեւ կ'անձրեւէր, բայց ժողովուրդը կը դիմագրաւէր այդ ցուրտը իր կեանքը ազատելու գնով:

Որքան աղետալի էր տեսնել փլատակ տուներ, վիրաւորներ եւ քարերուն տակ մնացած դիակներ: Այդ բոլորը տեսնելով միայն հասկցայ, որ աշխարհի մէջ ոչ մէկ բան հոգիէդ անելի արժէք ունի:

Երկու ահաւոր երկրաշարժներէ ետք, երբ պատահեցաւ երրորդը, ժողովուրդը ապաստան գտաւ՝ եկեղեցիները, ակումբի սրահները եւ դպրոցները: Ժողովուրդը իրար մօտ գալով կը մխիթարուէր, հաւաքական կեցութիւնը ուժ կը ներշնչէր:

Իսկապէս պարծանք զգացի, երբ տեսայ ակումբի տղոց ժողովուրդը հիւրընկալելու միասնական աշխատանքը:

Թելուզ վիրաւոր, բայց տակաւին օրհնուած երկիր եւ ժողովուրդ ենք:

Այս է կեանքը, պայքար է, որ կը շարունակուի իր լաւ ու վատ օրերով: Կարելորդ չյանձնուիլն է:



Երիտասարդական Ոսպնեակ

ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՋ ԱՊԱՍՏԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԵՏ

Կիրառ Աւրնեան

6 Փետրուար 2023, ժամը 4:17, ժամացոյցին սլաքը Սուրիոյ ժողովուրդին քով կանգ առաւ ու ժամանակը շատ դժուարութեամբ իր քայլերը առնել սկսաւ: Պատերազմէ անցած ժողովուրդին մօտ այս ցնցումը



յառաջացուց տուր վախ մը, ինչպէս կը պատմէ երկու զակի մայր եւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի դաստիարակ Նայիրի Չաօդեան:

Ան երկրաշարժի առաջին վայրկեանները նկարագրելով կ'ըսէ.

«Սկիզբը չգիտցանք ինչ պատահեցաւ: Երկրորդը անմիջապէս քանի մը երկվայրկեան ետք եղաւ: Իւրաքանչիւրը իր փոքրիկը շալկած շէնքէն դուրս գալ կը ջանար:»

Չէինք գիտեր, թէ ի՞նչ կը սպասէր մեզի, բոլորին նման շուարած, չէինք գիտեր, թէ ո՞ւր պիտի երթանք, ի՞նչ պիտի ընենք: Չէինք գիտեր, թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր յաջորդ քայլը, արդե՞օ՞ք ողջ պիտի մնանք, թէ մեր կեանքի վերջին վայրկեանները կ'ապրինք: Դժուար է նկարագրել այդ վիճակը. տեղատարաւ անձրեւ էր, կարծէք կեանքի դռները փակ էին մեր դիմաց:

Փառք Աստուծոյ, քանի մը երկվայրկեան վերջ գետինը հանդարտեցաւ: Նոյն վայրկեաններուն



ակումբները, եկեղեցիները եւ Զարէն Եփփէ ճեմարանը բացին իրենց դռները՝ ընդունելու բոլորը անխտիր: Այստեղ ապահով կը զգանք, շրջափակը մեծ է, սրահը նոյնպէս: Միասին ըլլալը կը դիւրացնէ մեր վիճակը, բոլորս կը ջանանք գիրար մխիթարել ու լաւ տրամադրութիւն հաղորդել իրարու: Մեր

Թուրքիոյ նուրջ

ԻՐԱՐԱՅԱՉՈՐԴԵՐԿՐԱՆԱՐԺՆԵՐ ԹՈՒՐԵՒՈՅ ՄԷՋ

«Երմէնիապէր».-Ստորգետնեայ ցնցումները Թուրքիոյ մէջ չեն դադարած: Սուրիոյ սահմանակից հարաւարեւելեան Յաթայ նահանգը կրկին ցնցուած է:

Թուրքիոյ արտակարգ իրավիճակներու եւ աղետներու վարչութեան տեղեկութեան համաձայն, 6 Մարտին, լոյս 7-ի գիշերը Թուրքիոյ հարաւարեւելքի մէջ գտնուող Յաթայ նահանգի Տեֆնէ շրջանին մէջ 4.1 ուժգնութեամբ եւ 7.4 քմ խորութեամբ երկրաշարժ տեղի ունեցած է:



Յիշեցնենք, որ 6 Մարտի ցերեկը Յաթայ նահանգի Արսուզ շրջանին մէջ 4.1 ուժգնութեամբ եւ 7 քմ խորութեամբ երկրաշարժ տեղի ունեցած էր:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՈՒՄԻ ՌԻՔԻՏԱՆԵԱՆ ԴԻՄ ԵՆ ԷՐՏՈՂԱՆԻ ԿՈՂՄԷ ՓՈՒԹԻՆ-ՉԵՔԵՆՍԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Թուրքիոյ նախագահին առընթեր անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան խորհուրդի անդամ Չաղըրը Էրիան «ՌԻԱ Նովոսթի»-ին ըսած է, որ Միացեալ Նահանգներն ու Բրիտանիան դէմ են, որ Թուրքիոյ



նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Ռուսիոյ եւ Ուքրանիոյ նախագահներ Վլատիմիր Փութինի եւ Վլատիմիր Չելենսքիի միջեւ հանդիպում կազմակերպէ:

«Անոնք (Միացեալ Նահանգներն ու Բրիտանիան, «Ա.») կ'ուզեն կարելի եղածին չափ երկար պատերազմ,

անոնք չեն մտածեր ուքրանացիներու ապագային մասին, չեն մտածեր խաղաղութեան մասին», ըսած է Էրիան:

Ան կը կարծէ, որ Էրտողան ի վիճակի է կազմակերպել այս հանդիպումը, եւ այս պարագային կարելորդ է ոչ թէ միացեալ լուսանկարը, այլ բանակցութիւններէն ետք որոշակի արդիւնքներու ձեռքբերումը:

Նախ եւ առաջ ըստ Էրիանի, կարելորդ է զինադադարի հասնիլը:

Նախապէս Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պլինքըն ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին մէջ ըսած էր, որ Միացեալ Նահանգներ Ուքրանիոյ մէջ զինադադարին դէմ են եւ կը կարծեն, որ Ռուսիան զինուորական գործողութիւններու որեւէ դադար պիտի օգտագործէ ներուժ կուտակելու եւ հետագայ յարձակողական գործողութիւններ կատարելու համար:

դպրոցը, մեր երկրորդ տունն էր արդէն, հիմա իսկական տուն, ապաստարան դարձաւ բոլորիս համար»:

Շրջափակին մէջ կանգնած հանրակառքերը եւս լեցուն էին ապաստանեալներով: Հայ եւ տեղացի արաբ ապաստանեալներով լեցուն էր նաեւ Ճեմարանի «Չարեհեան» գրադարանը: Երբ հարց տուինք, թէ ինչպէ՞ս է մթնոլորտը այնտեղ, ակումբի մեր տղաքը պատասխանեցին.

«Ժողովուրդը առաջին երկու օրերը շատ մտահոգ եւ վախցած էր, բայց կամաց-կամաց արդէն կը փարատին այդ զգացումները: Ժողովուրդին ամէն տեսակ օգնութիւն կը փորձենք հայթայթել այս դժուար պայմաններուն մէջ: Ամէնէն դժուարը փոքրերուն վիճակն է, որորվիտեւ ամէնէն խոցելին են ու բաւական դժուարութիւններու կը մատնուին իրենց առօրեայէն դուրս գալով: Անոնք այնքան ուրախացան, երբ Ճեմարանէն ներս իրենց յատուկ յայտագիր մը հրամցուեցաւ: Խաղալիքը առնողը մօր քով վազեց՝ իր ուրախութիւնը արտայայտելու»:

Այս օրերուն շնորհակալ գործ տարին հալէպահայ միութիւններն ու եկեղեցիները, կազմակերպ աշխատանքով անոնք ոչ միայն ապաստան տուին ժողովուրդին, այլեւ ամէն ջանք ի գործ դրին համայնքի գաւազներու բնակարաններու նորոգութեան նպաստելու եւ մարդասիրական օժանդակութիւններ հայթայթելու:

ԻՐԱՅԷԼ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԷՆՔԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԱԾ Է ԱՏՐՊԷՅՃԱՆԻ

Յարութ Սասունեան

Իսրայելեան «Հաարեց» (Haaretz) թերթը 5 Մարտին ապշեցուցիչ յօդուած մը հրատարակած է՝ «Իսրայելեան ռազմակերպութիւնը 92 թռիչքներ կը բացայայտեն զինամթերքի արտահանումը Ատրպէյճան» վերնագրով:

Յօդուածին մէջ կը նշուի, որ 2 Մարտին ատրպէյճանական Silk Way Airlines-ի բեռնատար օդանաւը վայրէջք կատարած է Իսրայելի Օվտա ռազմական օդակայան, իսկ երկու ժամ անց՝ Թուրքիոյ եւ Վրաստանի Հանրապետութեան տարածքով վերադարձած է Պաքու: Վերջին եօթը տարիներուն, այս 92-րդ բեռնատար թռիչքն է Պաքուէն դէպի Օվտա՝ Իսրայելի միակ օդակայանը, ուրկէ կը թույլատրուի պայթուցիկ նիւթերու արտահանումը: Ռազմական այս մատակարարումները զգալիօրէն աւելցած են 2016, 2020, 2021 եւ 2022-ին, Հայաստանի եւ Արցախի վրայ Ատրպէյճանի յարձակումներու ընթացքին: Ատրպէյճանի նախագահ Իլիւհմ բնութագրած է Իսրայելի գաղտնի յարաբերութիւնները Ատրպէյճանի հետ՝ իբրեւ սառնոցի կտոր, որուն տասնէն ինն կը գտնուի մակերեւոյթէն վար:



Իսրայել կը մատակարարէ Ատրպէյճանի սպառազինութեան գրեթէ 70 տոկոսը եւ ասոր դիմաց կը ստանայ ներկրուող նաւթին մօտաւորապէս կէսը: «Հաարեց» կը մէջբերէ արտասահմանեան լրատուական միջոցներու աղբիւրները, որոնք բացայայտած են, որ «Ատրպէյճան թող տուած է Մոսատին (Իսրայելի հետախուզական գործակալութիւն) ստեղծել առաջնային մասնաճիւղ (Ատրպէյճանի մէջ)՝ վերահսկելու, թէ ինչ կը կատարուի Ատրպէյճանի հարաւը գտնուող դրացի Իրանի մէջ եւ Նոյնիսկ նախապատրաստած է օդակայան, զոր նախատեսուած է Իսրայելին օգնելու համար, եթէ վերջինս որոշէ յարձակիլ Իրանի միջուկային կառոյցներուն վրայ: Երկու տարի առաջուան հաղորդագրութիւններուն մէջ ըստուած էր, որ Մոսատի գործակալները, որոնք գողցած են Իրանի միջուկային արխիւը, զայն մաքսանենց ճանապարհով Իսրայել տեղափոխած են Ատրպէյճանի տարածքով: Ատրպէյճանի պաշտօնական հաղորդագրութիւններուն համաձայն՝ տարիներու ընթացքին Իսրայել անոր ծախած է ամենէն յառաջադէմ սպառազինութեան համակարգերը՝ պալիսթիք հրթիռներ, հակաօդային պաշտպանութեան եւ էլեկտրոնային պատերազմի համակարգեր, քամիքածէ անօդաչու թռչող սարքեր եւ այլն»:

«Հաարեց» բացայայտած է, որ ատրպէյճանական Silk Way Airlines օդանաւային ընկերութիւնը «շարքաթական երեք թռիչք կ'իրականացնէ Պաքուի եւ (Իսրայելի) Պեն Կուրիոն միջազգային օդակայանի միջեւ՝ Boeing 747 բեռնատար օդանաւերով»: Ասկէ գատ, Արեւելեան Եւրոպայի որոշ երկիրներ շրջանցած են Ատրպէյճանի զինամթերք ծախելու արգելք՝ զայն առաքելով Իսրայելի վրայով:

Եւրոպայի եւ ԱՄՆ-ի կողմէ Հայաստանի եւ Ատրպէյճանի զինամթերք ծախելու սահմանափակումը կարելիութիւն ստեղծած է Իսրայելի՝ միլիառաւոր տոկարներ շահելու Ատրպէյճանին զէնք ծախելով:

«Հաարեց» կը հաղորդէ, որ «Իսրայել դէպի երկիր (Ատրպէյճան) արտահանած է սպառազինութիւններու շատ լայն տեսակակազմ» սկսած Tavor ինքնազործներէն մինչեւ ամենաբարդ համակարգերը, ինչպիսիք են ռատարը, հակաօդային պաշտպանութիւնը, հակահրասայլային հրթիռները, պալիսթիք հրթիռները, նաւերը եւ անօդաչուներու լայն տեսակակազմ, ինչպէս հետախուզական, այնպէս ալ յարձակման նպատակով: Իսրայելեան ընկերութիւնները նաեւ մատակարարած են յառաջադէմ լրտեսական արհեստագիտութիւններ, ինչպիսիք են Verint-ի հաղորդակցութեան վերահսկողութեան համակարգերը եւ NSO Group-ի Pegasus լրտեսող ծրագիրները, գործիքներ, որոնք օգտագործուած են Ատրպէյճանի մէջ լրագրողներու, միատեսակներու համայնքի եւ իրաւապաշտպաններու դէմ»:

Մթնոլորտի հաղորդութեան միջազգային հիմնարկը գրած է. «Իսրայելի զինամթերքի արտահանումը դէպի Ատրպէյճան սկսած է 2005-ին՝ Իսրայելի ռազմական արդիւնաբերութեան (IMI Systems) կողմէ, 150 քմ. հեռահարութեամբ Lynx ռազմակի հրթիռային համակարգերու վաճառքով: IMI, որ 2018-ին ձեռք բերած է Elbit Systems-ը, նաեւ մատակարարած է LAR-160 թէթեւ հրետանային հրթիռներ՝ 45 քմ. հեռահարութեամբ. ըստ Human Rights Watch-ի գեկոյցին, Ատրպէյճան գանոնք օգտագործած է Լեռնային Ղարաբաղի բնակելի թաղամասերուն մէջ արգիլուած քասեթային զինամթերք կրակելու համար», թէ Իսրայելի եւ 123 այլ երկիրներու արգիլումը է քասեթային ռումբերու օգտագործումը:

«Հաարեց» կը հաղորդէ, որ «2007-ին Ատրպէյճան պայմանագիր ստորագրած է Aeronautics Defense Systems-էն չորս հետախուզական անօդաչու թռչող սարք գնելու մասին: Ասիկա ռազմաթիւ գործարքներէն առաջինն էր: 2008-ին ան գնած է տասը Hermes 450 անօդաչու թռչող սարք Elbit Systems-էն եւ 100 Spike հակահրասայլային հրթիռներ, որոնք

արտադրուած են Rafael Advanced Defense Systems-ի կողմէ, իսկ 2010-ին գնած է եւս 10 հետախուզական անօդաչու թռչող սարքեր: Elbit-ի պատկանող Soltam Systems անոր վաճառած է ATMOS ինքնազնաց հրանօթներ եւ 120 մմ. long Cardom ականանետեր, իսկ 2017-ին Ատրպէյճանի զինանոցը ամբողջացած է աւելի յառաջադէմ Hanit ականանետերով: Wikileaks-ի մէջ գաղտնագրուած հեռագիրի մը համաձայն՝ յառաջադէմ կապի սարքաւորումներու վաճառքը Tadiran-էն, Նոյնպէս ստորագրուած է 2008-ին»:

Ըստ «Հաարեց»-ի՝ «2011-ին Իսրայել եւ Ատրպէյճան ամրապնդած են իրենց յարաբերութիւնները 1.6 միլիար տոլար արժողութեամբ հսկայական գործարքով, որ կը ներառէր Barak հրթիռներու մարտկոց՝ օդանաւեր եւ հրթիռներ որսալու համար, ինչպէս նաեւ Իսրայելի օդատիեզերական արդիւնաբերութեան (IAI) արտադրած Searcher եւ Heron անօդաչու թռչող սարքերը: Հաղորդուած է, որ 2020-ին, Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի գրեթէ ամարտին, Barak մարտկոցը խոցած է Հայաստանի կողմէ արձակուած «Իսքանտեր» պալիսթիք հրթիռը: Աւելին, Aeronautics Defense Systems սկսաւ համագործակցիլ նաեւ Ատրպէյճանի տեղական սպառազինութեան արդիւնաբերութեան հետ, ուր արտադրուած են Orbiter քամիքածէ (թափառող զինամթերք) 100 անօդաչու թռչող սարքերը, զորս Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը կոչած էր «մղձաւանջ հայկական բանակի համար»:

2021-ին, «(Իսրայելի) Aeronautics Defense Systems-ի դէմ մեղադրանք ներկայացուած է՝ իր ամենէն յայտնի յաճախորդներէն մէկուն հետ կապուելու պահուն զէնքի արտահանումը կարգաւորող օրէնքը խախտելու համար: Ղատարանի կողմէ կիրարկուած արգելքի որոշումը կը խոչընդոտէ յաւելելու մանրամասներու հրատարակումը: Ատրպէյճանական բանակի հրասայլերու արդիականացման նախագիծը սկսած է 2010- ականներու սկիզբը: Elbit Systems արդիականացուցած է համալրած է հին խորհրդային T-72 մոտեցնող նոր պաշտպանիչ հանդերձանքով՝ հրասայլերու եւ անոնց անձնակազմի գոյատեւման համար, ինչպէս նաեւ արագ եւ ծշգրիտ թիրախներու յայտնաբերման ու կրակի կառավարման համակարգերով: Արդիականացուած հրասայլերը, որոնք յայտնի են «Աւլան» (Առիւծ) անունով, նկարահանուած են 2013-ի ռազմական շքերթի ընթացքին: 2013-ին, Ատրպէյճանի ռազմածովային ուժերը ամբողջացած են վեց պարեկային նաւերով՝ Իսրայելի ռազմածովային ուժերու Sa'ar 4.5 դասի հրթիռային նաւերու հիման վրայ, որոնք արտադրուած են Իսրայելի նաւաշինական գործարաններու կողմէ եւ կը կրեն Spike հրթիռներու ռազմածովային տարբերակը, ինչպէս նաեւ վեց Shaldag MK V պարեկային նաւեր՝ Rafael's Typhoon-ի հրետանային ամրակներով եւ Spike հրթիռային համակարգերով: Ատրպէյճանի ռազմածովային ուժերը նաեւ գնած են 100 «Լահաթ» հակահրասայլային կառավարուող հրթիռներ»:

2014-ին, «Ատրպէյճան IAI-էն պատուիրեց առաջին 100 Harop քամիքածէ անօդաչու թռչող սարքերը, որոնք կարելի գործիք էին հետագայ մարտերուն մէջ: Նոյն տարի, Ատրպէյճան նաեւ օդային նախագգուշացման եւ պաշտպանութեան երկու յառաջադէմ ռատիօ-տեղորոշիչ համակարգեր ձեռք բերաւ IAI դուստր ձեռնարկութենէն...: Երկու տարի անց, Ատրպէյճան Elbit Systems-էն գնած է եւս 250 SkyStriker քամիքածէ անօդաչու թռչող սարքեր: Մարտական շրջաններէն բազմաթիւ տեսակի թռչող սարքերը կը յարձակին հայկական ուժերու վրայ...: 2016-ին, վարչապետ Բենիամին Նեթանիահուի Պաքու կատարած այցելութեան ընթացքին Ալիեւ բացայայտեց, որ երկու երկիրներու միջեւ արդէն կնքուած են պայմանագիրներ մօտաւորապէս 5 միլիար տոլարի «պաշտպանական սարքաւորումներ» գնելու համար: 2017-ին, Ատրպէյճան Elbit Systems-էն եւ Hermes 900 յառաջադէմ անօդաչու սարքեր եւ LORA պալիսթիք հրթիռներ գնած է IAI-էն՝ 430 քմ. հեռահարութեամբ: 2018-ին, Ալիեւ հանդիսաւոր կերպով բացած է ռազմակերպութեան, ուր տեղակայուած են LORA հրթիռները՝ Հայաստանի մայրաքաղաք Երեւանէն մօտաւորապէս 430 քմ. հեռահարութեան վրայ: 2020-ի պատերազմին, առնուազն մէկ LORA հրթիռ արձակուած է եւ ըստ տեղեկութիւններու՝ անիկա հարուածած է կամուրջ մը, որով Հայաստանը զէնք եւ արհեստագիտութիւն կը մատակարարէր Լեռնային Ղարաբաղի մէջ գտնուող իր ուժերուն: Աւելի յառաջադէմ Spike հրթիռներ ուղարկուած են 2019 եւ 2020 թուականներուն»:

Սոսկալի է, որ Հոլոքոսթի ժառանգները նման գանգուածային մահացու զէնք կը մատակարարեն Ատրպէյճանի՝ Հայոց Ցեղասպանութեան ժառանգները սպանելու համար:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՊԱՅԾԻԿ ԵՐԷՅԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 12 Մարտ 2023-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցույ մէջ, Վիլլաներ - Հալեպ:

ԻՆՉ ԿՐՏԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Նիւթական գետնի վրայ յաջողութիւն մը պիտի ունենայ: Սեփական ջանքերով պիտի ընթանայ եւ պարգեատրուի:



Ցուլ

Շատ բախտաւոր էք եւ մեծ եկամուտներ պիտի ունենայք այս շաբաթ: Առեւտուրի ամենաբարձր արդիւնքները շուտով պիտի իրականանան:



Երկուորեակ

Ձեր մտավախութիւնները վերջ պիտի գտնեն: Ձեր ժրաջան ըլլալուն շնորհիւ գումար մըն ալ պիտի ստանայք եւ գուարճանայք:



Խեցգետին

Ձեր բարեկամներուն շնորհիւ լաւ գործի մը ամիսը պիտի ունենայք: Լաւատես եղէ՛ք եւ պիտի յաջողիք:



Առիծ

Շատ բարի էք ու աշխատասեր: Ձեր գովելի նկարագրին շնորհիւ բոլորին յարգանքին պիտի արժանանայք ու գնահատուիք:



Կոյս

Մարդիկ նոր գործի մը առաջարկը պիտի տան ձեզի եւ դուք մեծ խանդավառութեամբ պիտի ընդունիք զայն: Յաջողութիւնը պիտի թակէ ձեր դուռը:



Կշիռք

Մարդիկ պիտի գնահատեն ձեզ ձեր հաւատարմութեան եւ ժրաջան աշխատանքին համար: Սրտի մօտիկ անձնաւորութիւն էք, որուն կարելի է գաղտնիքներ վստահիլ:



Կարիճ

Անհրաժեշտ է, որ մարդոց հետ ձեր փոխյարաբերութիւնները զարգացնէք: Ձեր վեհանձնութիւնը մեծ յաջողութիւններու պիտի առաջնորդէ ձեզ:



Աղեղնաւոր

Դուք պետք է ձեր վաստակը օգտագործէք կարիքաւորներուն օժանդակութեան համար: Ձեր ապահովական վիճակը պիտի բարելաւուի եւ դուք հոգեկան խաղաղութիւն պիտի գտնէք:



Այծեղջիւր

Մեծ գումարներ պիտի մսխէք անօգուտ բաներու համար: Աւելի խելամիտ ձեռով կատարեցէ՛ք ձեր հաշիւները եւ առաջնահերթութիւնը տունէ՛ք սննդեղէնին:



Ձրիս

Մեծ ճամբորդութիւն մը ծրագրած էք կատարել, որ հաճելի անակնկալներով լի է: Անակնկալ նուէր մը պիտի ստանայք սիրելի անձէ մը:



Ձուկ

Ձեր ամենօրեայ կարիքները հոգալու համար մօտիկ բարեկամ մը պիտի աջակցի ձեզի: Պաշտօնի բարձրացում մը պիտի ունենայք, որուն շնորհիւ պիտի հպարտանայք:



ՄԻՏԵ-ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ



Շատ սերտ է յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի միտքին եւ մարմինին միջեւ: Երբ մեկը բան մը ազդուած է, միւսն ալ կ'ազդուի: Միտքին վիճակը կ'ազդէ ամողջութեան վրայ մեր ըմբռնածէն շատ անելի մեծ տարողութեան: Հիւանդութիւններէն շատերը, որոնցմէ մարդիկ կը տառապին, հետեւանք են մտային ընկճման:

Երբեմն հիւանդութիւնը յառաջ կու գայ, եւ յաճախ մեծապէս կը զարգանայ երեւակայութեամբ: Շատերը ցկեանս անկար են, սակայն կրնային լաւ ըլլալ եթէ դրական ըլլային: Շատեր կ'երեւակայեն թէ ցուրտի ամէն թեթեւ ենթարկում պատճառ պիտի ըլլայ հիւանդութեան, եւ չար արդիւնքը յառաջ կու գայ, որովհետեւ ակնկալուած է:



Քաջութիւն, յոյս, հաւատք, համակրանք, սեր եւ ամողջութիւն կեանք կ'երկարեն: Գոհուանալ միտք մը ու զուարթ տրամադրութիւն մը ամողջութիւն է մարմին եւ զօրութիւն հոգիին: «Ուրախ սիրտը դերի պէս օգտակար է» (Առակաց 17:22):

Հիւանդին դարմանման մէջ մտային ազդեցութիւնը պետք չէ անտեսել: Այս ազդեցութիւնը, երբ ճշգրիտ գործածուի, կը հայթայթէ հիւանդութեան դէմ դնելու ամենաարդիւնաւոր ազդակներէն մին:

Համակրանք եւ փափկանկատութիւն յաճախ անելի մեծ օգտակարութիւն կ'ունենան հիւանդին, քան ամենաճարտար դարմանում մը, որ կը տրուի պաղ եւ անտարբեր կերպով մը:

Շատեր, վախնալով որ եթէ ճշմարտութիւնը յայտարարուի հիւանդը պիտի յուզուի կամ վիատի, ապաքինման սին յոյսեր կու տան, եւ նոյնիսկ կը թողուն որ հիւանդը գերեզման մտնէ առանց զանկազ գուշակներու իր վտանգէն: Այս բոլորը անմտութիւն է: Ծիշը է որ միշտ կարելի չէ հիւանդին բացատրել իր վիճակին ծանրութեան իրական աստիճանը: Ասիկա կրնայ վրդովեցնել զինք ու յապաղեցնել ու նոյնիսկ արգիլել դարմանումը: Ոչ ալ կարելի է բոլոր ճշմարտութիւնը ըսել անոնց, որոնց հիւանդութիւնը մեծ մասամբ երեւակայական է: Այդուհանդերձ պետք չէ խաբել հիւանդը, այլ հարկ է բացատրել անոր հիւանդութիւնն ու բուժման մանրամասնութիւնները փուլ առ փուլ, ամողջ ու տագնապէ գերծ պահելով անոր միտքը:

Կամքի ուժը մեծ դեր ունի դժուարութիւններու յաղթահարման մէջ: Եթէ կամքը արթուն եւ լաւ ուղղութեան մէջ պահուի, կորով պիտի ընծայէ ամբողջ եռութեան եւ հրաշալի օգնութիւն մը պիտի ըլլայ ամողջութեան պահպանման մէջ: Ան ուժ մըն է նաեւ որ գործ ունի հիւանդութեան հետ:

Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ ֆուտբոլի երիտասարդական հաւաքականը Ուզպեքիստանի մէջ իր մասնակցութիւնը բերաւ Ասիոյ ախոյեանական մրցաշարին: Առաջին հանդիպումին կազմը 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ հիւրընկալ հաւաքականէն, իսկ երկրորդին 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Իստոնիզիային:



- Սուրիոյ պասքեթի դաշնութիւնը յայտարարեց, որ պասքեթի բոլոր մրցաշարքերը պիտի սկսին Մարտ ամսուան 15-էն սկսեալ: Տղոց մրցաշարքին գծով դաշնութիւնը դիտել տուաւ, որ Ա. փուլի խումբերուն մաս ախտի կազմէ միայն մէկ արհեստավարժ խաղացող, իսկ ասարտական քառեակի փուլին երկրորդ արհեստավարժի մասնակցութիւնը պիտի որոշուի ակումբներուն հետ խորհրդակցաբար:

- Հոմսի Զարամէ ակումբը պաշտօնագուրկ ըրաւ ֆուտբոլի խումբի մարզիչ Ահմատ Ազգամը եւ զինք փոխարինող առաջադրեց Թարեք ալ-ճապպանը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՐՄԱՄԱՐԶԻԿ ԱՐԹՈՒՐ ԴԱԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՆՈՅԵԱՆ

Զաթարի մայրաքաղաք Տաուհայի մէջ կայացած մարմնամարզութեան աշխարհի գաւաթի խաղարկութեան 2-րդ փուլին, աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Արթուր Դաթեան գերազանց մրցոյթ ունեցաւ հենացատկի եզրափակիչին եւ նուաճեց ախոյեանի կոչումը: Հայ մարզիկը վաստկեցաւ 15.083 կէտ եւ մէկ քայլով առաջ անցաւ ուքրանացի Իկոր Ռատիվիլովէն: Երրորդ տեղը գրաւեց որակաւորման փուլի առաջատար, ֆիլիպինցի Գառլոս Իլյոն: Յիշեցնենք, որ Արթուր Դաթեան յաղթած էր նաեւ Կոտպուսի մէջ տեղի ունեցած աշխարհի գաւաթի խաղարկութեան առաջին փուլին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԸ ՊԻՏԻ ԶՄԱՍՆԱԿՅԻ ԵՐՈՂԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ

18-29 Մարտը Մոնթենեկոյի Պետրովաց քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ կանանց ճատրակի Եւրոպայի 2023-ի անհատական առաջնութիւնը: Ըստ մրցաշարքի պաշտօնական կայքին, առաջնութեան մասնակցելու առաջարկ ներկայացուցած են 33 երկիրներէ 138 մարզուհիներ, որոնցմէ 57-ն կրօսմայստրներ են: Հայաստանէն հանդէս պիտի գան 6 իգական հասակէտեան, Լիլիթ Մկրտչեան, Աննա Մ. Սարգսեան, Մարիամ Մկրտչեան, Սուսաննա Գաբոյեան եւ Պոլինա Կոպակ: Հայաստանի 2023-ի ախոյեան Մարիա Գեորգեան մաս ախտի չկազմէ սոյն մրցաշարքին, որովհետեւ ան ներկայիս կը գտնուի Արաբական Միացեալ Էմիրութիւններ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԼԻՎԵՐՓՈՒԼ 7 - 0 ԱՐԴԻՆՔՈՎ ՅԱՂԹԵՑ ՄԱՆԶԵՍԹԸՐ ԻՆԱՅԹԸՏԻՆ

Անգլիոյ առաջնութեան 26-րդ փուլին փոխախոյեան Լիվըրպոլը «Էնֆիլտ» մարզադաշտին մէջ ընդունեց Մանչեսթըր Ինայթըտը: Գերմանացի Իրկէն Կլոպի գլխաւորած խումբը տպաւորիչ յաղթանակ տանելով 7 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց մրցակիցը: Կրկնակի կոլերու հեղինակներ դարձան Յարթալկոներ՝ հոլանտացի Կոտի Գակպոն, ուրուկուէյցի Տարուին Նուկիե եւ եգիպտացի Մուհամմետ Սալահ:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 429)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■						■		
2									■		■	
3			■			■	■	■				
4						■	■	■				
5			■		■							
6	■								■			■
7										■		
8			■			■	■	■				■
9		■										
10					■		■	■		■		
11									■			
12												■

Հորիզոնական

- «Լուսին չկար, մութ գիշեր էր» երգը նուիրուած է իր յիշատակին: Զօրք: Հարցական դերանուն:
- Մէկ օրուան վարձ:
- Տառի մը դրացիները: Հակառակ՝ տառի մը անունը: Դատարկ:
- Աշխարհագրական պատկեր: Հակառակ՝ տարածքի միաւոր:
- Փոքրացնող մասնիկ: Հարց:
- Պոլսահայ տիտղոս: Առաջին կինը: Փոքրացնող մասնիկ:
- Խթում, նախատօնակ: Շաղկապ:
- Տառի մը դրացիները: «Ես» դերանունի սեռական հոլովը: Տառի մը անունը:
- Չուարթ: Իգական անուն:
- Խումբ, երամ: Աղբիւր:
- Ազգակից: Ոչխարի բուրդ՝ խուզուած ու մաքրուած:
- «Լեռներու Խորհուրդը» գրական ստեղծագործութեան հեղինակը:


Ուղղահայեաց

- Ասացուածքը կ'ըսէ. «.....» վարպետ, գործի անպետ»: Ռազմախաղ:
- Անսովոր: Արական անուն:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ հանքային համեմ: Մեզի պատկանող:
- Պատմիչ հեղինակ: Ճափոնական թատրոն:
- Յափշտակիչ թռչուն: Արցախի առաջին դպրոցին վայրը:
- Սարսափ: Յեսանել, ուշադրութիւնը լարել: Հակառակ՝ աչք:
- 420: Հակառակ՝ շաղկապ: 1173-ին Կիլիկեան Հայաստանի իռչակուած մայրաքաղաքը:
- Սիամանթոյի ծննդավայրը: Աւետիս Ահարոնեանի պատմուածքներէն: 6600:
- Յուցական դերանուն: 6009:
- Էական բայ: Կողմ: Թաքուն պայթուցիկ:
- Երեկոյ: Ձայնանիշ:
- Յորդաիս: Որպէս:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 428)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	տ	ա	բ	ա	բ	ա	խ	տ	■	հ	է	զ
2	ա	բ	տ	է	ւ	ն	■	լ	ա	լ	ա	
3	ս	ի	■	■	■	■	ա	բ	ա	զ	բ	
4	ն	շ	■	■	■	զ	ա	մ	■	մ	ա	մ
5	է	ի	■	■	■	■	ն	բ	■	բ	զ	ի
6	ա	ն	կ	ա	բ	■	■	■	■	■	է	կ
7	կ	տ	ա	կ	ա	բ	■	■	■	■	■	■
8	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9	ա	կ	ա	ն	ա	կ	ի	տ	■	ի	մ	■
10	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
11	փ	ա	ն	դ	ի	■	■	■	■	կ	բ	ա
12	ի	կ	■	■	■	■	■	■	■	■	■	■

ԼՈՒՐԵՐ



ՀԱԼԴԻ ԱՉՎԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆ ԻՐԵՆՅ՝ ԴԱՍԱԽԱՆՊՈՒԹԻՒՆԸ



Երկրաշարժի ցնցումեն ետք, Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան որոշումով, ապահովական Նկատառումներով, աղէտահար քաղաքներու ուսումնական կեանքը դադարած էր, դպրոցները՝ փակուած:

Կրթութեան Նախարարութեան ապահով ու վերանորոգուած

դպրոցներու վերաբացման որոշումին լոյսին տակ, Հայկաի հայկական կարգ մը վարժարաններ նախորդ շաբաթ, իսկ ազգային եւ միութենական վարժարանները երկուշաբթի, 6 Փետրուարին, երկրաշարժէն մէկ ամիս ետք, բացին իրենց դռներն ու վերականուսումնակրթական կեանքը:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ՕՐԶՆԱԲԱՇԽ ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆԸ ԱՉԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆ

Երկուշաբթի, 6 Մարտ 2023-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան օրհնաբաշխ այցելութիւն տուաւ Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարան, ընկերակցութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամներ տիար Գուրգէն Գալուստեանի եւ երկրջ. Յարութ Արքեպիսկոպոստի:



Առաջնորդ Սրբազան Հայրը ջերմապէս դիմաւորուեցաւ Ճեմարանի խնամակալութեան ատենապետ երկրջ. Տիար Դեմետրիոսեանի, խնամակալութեան անդամներու, Ճեմարանի տնօրէնուհի տիկ. Չեփիւռ Րէստեանի եւ Ճեմարանի պետական տնօրէնին կողմէ:



Ճեմարանի տնօրէնուհին խօսք անելով բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր եւ շնորհակալութիւն յայտնեց անոր օրհնաբաշխ այցելութեան համար: Սրբազան Հայրը իր սրտի խօսքը ուղղեց աշակերտներուն: Ան գօտեակնդեց երկրաշարժի ցնցումներ ապրած աշակերտները, պատուիրելով, որ այս փորձառութենէն առաւել զօրացած դուրս գան եւ



վերանորոգ թափով շարունակեն իրենց ուսումնակրթական կեանքը՝ աղօթքով եւ աշխատանքի լծուելով:

Մակար Սրբազան բարձր գնահատեց ծառայութիւնը Ճեմարանի խնամակալութեան, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, որոնք հակառակ բոլոր դժուարութիւններուն նուիրաբար կը ծառայեն հայ դպրոցին:

Այնուհետեւ, Սրբազան Հայրը տնօրէնութեան սենեակէն ներս հանդիպում ունեցաւ Ճեմարանի խնամակալութեան, տնօրէնուհիին եւ պետական տնօրէնին հետ, վեր առաւ անոնց տարած հայակերտումի նուիրական առաքելութիւնը եւ աղօթելով՝ ապահով եւ հեգասահ գործունէութիւն մաղթեց անոնց:

ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆԸ ՅԵՏ ԵՐԿՐԱՇԱՐՄԻ ԺՆՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԱՅՈՒՄՍ ԱՉԳ. ՄԻԱՅԵԱԼ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԵՒ ԱՉԳ. ՄԱՆԿԱԿԱՐԹԵՉ

Երկուշաբթի, 6 Մարտ 2023-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան այցելեց յետ



Երկրաշարժի ցնցումներուն վերաբացուած Ազգ. Միացեալ Նախակրթարան եւ Ազգ. Մանկապարտեզ, ընկերակցութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամներ տիար Գուրգէն Գալուստեանի եւ երկրջ. Յարութ Արքեպիսկոպոստի:



Առաջնորդ Սրբազան Հայրը ջերմապէս դիմաւորուեցաւ Ուսումնական Խորհուրդի ատենապետ օրդ. Անի Գալտընեանի, Ազգ. Միացեալ Վարժարանի հոգաբարձութեան ատենապետ տիար Յարութ Լեպլեյճեանի, հոգաբարձութեան անդամներու, Ազգ. Միացեալ Նախակրթարանի տնօրէնուհի տիկ. Նայիրի Բանոյեանի եւ Ազգ. Մանկապարտեզի մանկապարտեզ պանուհի տիկ. Նուշիկ Զաքրեանի կողմէ:



Սրբազան հայրը քաջալերեց աշակերտները եւ մաղթեց, որ յետ երկրաշարժի ցնցումներուն իրենց դասերը լաւապէս պատրաստեն՝ օգտաշատ դարձնելով իրենց առօրեան: Ան աշակերտներուն հետ աղօթեց, հայցելով Ամենակալ Աստուծոյ պահպանութիւնը:

Այնուհետեւ Մակար սրբազան շրջազայեցաւ դասարանները եւ մօտէն ծանօթացաւ դպրոցի ներկայ իրավիճակին եւ ուսումնակրթական կեանքին, ապա ան հանդիպում ունեցաւ Ուսումնական Խորհուրդի ատենապետին, Ազգ. Միացեալ Վարժարանի հոգաբարձութեան եւ Ազգ. Միացեալ Նախակրթարանի տնօրէնուհիին հետ, գնահատեց անոնց նուիրական ծառայութիւնն ու հայակերտումի ի նպաստ տարած աշխատանքը եւ մաղթեց, որ միշտ քաջալեր հանդիսանան աշակերտներուն, յատկապէս ներկայիս տիրող պայմաններուն մէջ: Ապա, տեսակցելով նախակրթարանի եւ մանկապարտեզի ուսուցչական կազմին հետ, գնահատեց անոնց նուիրական ծառայութիւնը եւ անոնց հետ աղօթելով՝ անվտանգ եւ ապահով ուսումնակրթական երթ մաղթեց:

Սրբազան հայրը տեսակցելով մանկապարտեզի փոքրիկներուն հետ, ուրախութեամբ մտիկ ըրաւ անոնց հոգեհարազատ երգերուն եւ ապահով ու անփորձանք օրեր մաղթեց անոնց: